

**Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա  
Իրավաբանների հայկական ասոցիացիա**

**ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ**

**ԴՍԱՐԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁՆ ՈՒ ՀՀ-ՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

**(Վերանայված)**

**ք. Երևան  
01 նոյեմբեր, 2021թ. ©**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### 1. Դատավորի իրավական կարգավիճակը

*1.1. Դատավորի իրավական կարգավիճակի վերաբերյալ միջազգային փաստաթղթեր*

*1.2. Դատավորի իրավական կարգավիճակի վերաբերյալ միջազգային փորձը*

1. Ամերիկայի Միացյալ Նահանգներ
2. Կանադա
3. Ուկրաինա
4. Էստոնիա
5. Լիտվա
6. Լատվիա
7. Գերմանիա
8. Ֆրանսիա
9. Լեհաստան
10. Ավստրիա
11. Իտալիա
12. Վրաստան
13. Ալբանիա
14. Բոսնիա և Հերցեգովինա
15. Քենիա
16. Ճապոնիա

### 2. Բարձրագույն դատական խորհրդի դերը դատարանների և դատավորների անկախության երաշխավորման համատեքստում

*2.1. Բարձրագույն դատական խորհուրդների վերաբերյալ միջազգային փաստաթղթեր*

*2.2. Դատական խորհուրդների վերաբերյալ միջազգային փորձը*



1. Ամերիկայի Միացյալ Նահանգներ
  2. Կանադա
  3. Ուկրաինա
  4. Էստոնիա
  5. Լիտվա
  6. Լատվիա
  7. Գերմանիա
  8. Ֆրանսիա
  9. Լեհաստան
  10. Ավստրիա
  11. Իտալիա
  12. Վրաստան
  13. Ալբանիա
  14. Բոսնիա և Հերցեգովինա
  15. Քենիա
  16. Ճապոնիա
3. ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի դերը հայաստանյան դատարանների և դատավորների անկախության երաշխավորման համատեքստում, բարեփոխումների իրականացման ուղղությունները

**Դատարանի անկախության և արդյունավետ գործունեության երաշխիքները.  
միջազգային փորձն ու ՀՀ-ում իրականացման մեխանիզմները ուսումնասիրություն**

**1. Դատավորի իրավական կարգավիճակը**

**1.1. Դատավորի կարգավիճակի վերաբերյալ միջազգային փաստաթղթեր**

*Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները. ՄԱԿ*

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի «Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները»<sup>1</sup> հիրավի կարելի է դիտարկել քննարկվող ոլորտի համար ելակետային նշանակության փաստաթուղթ: Այն հանգամանորեն անդրադառնում է դատավորի իրավական կարգավիճակի սկզբունքներին: Սույն զեկույցում հակիրճ ներկայացվում են վեց սկզբունքները:

**1. Անկախություն**

Անկախությունն իրավունքի գերակայության նախապայման է և արդար դատաքննության հիմնարար երաշխիք: Դատավորը պետք է արտահայտի դատական անկախությունը ինչպես անհատական, այնպես էլ ինստիտուցիոնալ առումով: Դատական անկախության սկզբունքի հիմքը՝ դատավորի կողմից դատարան ներկայացված գործերը քննելու և անաչառ որոշում կայացնելու կատարյալ ազատությունն է՝ առանց որևէ արտաքին միջամտության: *Կանադայի Գերագույն դատարանը* *Valente v. The Queen* գործում<sup>2</sup> նշում է, որ դատարանի անկախությունը երկկողմ է. նախ՝ իրավական, ապա՝ մտավոր: Առաջին պարագայում պետությունն ընդունում է դատական իշխանության կազմակերպման և գործունեության վերաբերյալ օրենսդրության, ստեղծում է համապատասխան կառուցվածքային հնարավորություն: Սակայն, անհերքելի է, որ Սահմանադրության հռչակագրային բնույթի նորմերն ինքնին անկախ դատական համակարգ չեն ստեղծում և պահում: Այստեղ անհրաժեշտ է, որ դատական համակարգի անկախությունը ճանաչվի և

<sup>1</sup> ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի «Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները», <[https://www.unodc.org/pdf/crime/corruption/judicial\\_group/Bangalore\\_principles.pdf](https://www.unodc.org/pdf/crime/corruption/judicial_group/Bangalore_principles.pdf)>

<sup>2</sup> Կանադայի Գերագույն դատարանի Վրլենթեյն ընդդեմ Դը Քուինի (Valente v. The Queen) գործը, <<https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/108/index.do>>

հարգվի իշխանության բոլոր երեք ճյուղերի կողմից, և առաջինը հենց դատական իշխանության կողմից: Նույն գործի շրջանակներում դատարանի նշում է՝ դատավորը կարող է ունենալ անկախության զգացում, սակայն եթե դատարանը, որտեղ նա պաշտոնավարում է, անկախ չէ իշխանության մյուս ճյուղերից, դատավորի անկախությունը նույնպես հարաբերական է դառնում:

Անկախության սկզբունքի խախտման, իշխանության ճյուղերի միջև ոչ իրավաչափ փոխհարաբերությունների մասին տարբեր երկրների իրավասու մարմինները բարձրաձայնել են և իրավական պրակտիկա են ձևավորել: Օրինակ, *Լիտվայի Սահմանադրական դատարանը* 1995թ. դեկտեմբերի 6-ի որոշմամբ<sup>3</sup> անկախության խախտում է համարել Կառավարության կողմից դատավորներին վճարված պարգևավճարները, քանզի նման գործողությամբ դատավորները ֆինանսական կախման մեջ են հայտնվել Կառավարությունից, ինչով խախտվել է անկախության տարրերից մեկը՝ օրենքով սահմանված վարձատրության միջոցով ֆինանսապես ապահովվելը:

Մեկ այլ օրինակով 2000թ. Ամերիկայի Վիրջինիա նահանգի Դատական վարքագծի խորհրդատվական մարմինը անկախության խախտում է համար դատավոր-պատգամավոր շփումը, որի ընթացքում պատգամավորը դատավորին հայտնի է դարձրել կոնկրետ գործի լուծման՝ օրենսդրի համար նախընտրելի տարբերակը:<sup>4</sup>

Դատական անկախության հիմնահարցն ունի նաև ներքին ասպեկտ: Հարկ է ապահովել նաև դատավորի անկախությունը այլ դատավորներից:

Այստեղ պիտի փաստենք, որ դատական համակարգի հիերարխիկ բնույթն անթույլատրելի է: Արդարադատություն իրականացնելիս դատավորը ոչ ոքի աշխատողը, ենթական կամ վերադասը չէ: Նա ենթարկվում է բացառապես Սահմանադրությանն ու օրենքներին:<sup>5</sup>

Դատավորի և դատական համակարգի նման խիստ առանձնացումն ինքնանպատակ չէ: Դրա շնորհիվ կապահովվի երկու կարևորագույն դրույթ<sup>6</sup>.

- *Դատավորի որոշումը պետք է զերծ լինի արտաքին ազդեցությունից: Դատավորը պետք է որոշում կայացնի բացառապես օրենքների, գործով առկա ապացույցների և*

<sup>3</sup> Լիտվայի Սահմանադրական դատարանի 1995թ. դեկտեմբերի 6-ի որոշում, <<https://www.lrkt.lt/en/court-acts/search/170/ta921/content>>

<sup>4</sup> Ամերիկայի Վիրջինիա նահանգի Դատական վարքագծի խորհրդատվական մարմնի թիվ 007 կարծիք, <[http://www.courts.state.va.us/programs/jeac/opinions/2000/00\\_7.html](http://www.courts.state.va.us/programs/jeac/opinions/2000/00_7.html)>

<sup>5</sup> ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակի մեկնաբանություն, կետ 40, <[https://www.unodc.org/documents/corruption/publications\\_unodc\\_commentary-e.pdf](https://www.unodc.org/documents/corruption/publications_unodc_commentary-e.pdf)>

<sup>6</sup> ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակի մեկնաբանություն, կետ 29, <[https://www.unodc.org/documents/corruption/publications\\_unodc\\_commentary-e.pdf](https://www.unodc.org/documents/corruption/publications_unodc_commentary-e.pdf)>

*ներքին համոզմունքի հիման վրա: Նա պետք է բացառի այլ սուբյեկտների գովասանքի կամ քննադատության ազդեցությունն իր որոշման վրա:*

- *Դատավորի մասնագիտական գործունեությանը միջամտելու պրակտիկան պետք է մերժվի: Դատարանի որոշման վրա ազդելու բոլոր փորձերը պետք է կատարվեն դատավարական թույլատրելի ընթացակարգերով՝ հրապարակավ, դատական նիստերի դահլիճում, և միայն դատավարության մասնակիցների կողմից:*

Հենց այս դրույթների կենսագործման նպատակով պետությունները քրեականացնում են արդարադատության իրականացմանը խոչընդոտելը, կամայականորեն միջամտելը և նմանօրինակ այլ արարքները:

Քննադատությանը տուրք չտալով, միաժամանակ պետք է ընդունել, որ ժողովրդավարական հասարակություններում այն տարածված է: Այսինքն, դատավորը չպետք է ակնկալի «անձեռնմխելիություն»՝ իր կայացրած որոշումների համար անհատների կամ պետական կառավարման այլ մարմինների կողմից քննադատվելուց:

Հարկ է նշել, որ ամբողջովին մեկուսացումը ո՛չ հնարավոր է, և՛ ո՛չ էլ ձեռնադր: Չպետք է ստեղծել իրավիճակ, որտեղ, ինչպես նշել է Միացյալ Նահանգների Գերագույն դատարանի նախագահ Վիլիամ Թաֆթը «դատավորը մտնում է մենաստան և իրեն նվիրում դատական գործին»: Դեռ ավելին, արտաքին շփումները չափազանց կարևոր են, քանզի դրանք օգնում են իրականացնել լիազորությունները: Օրինակ, այնպիսի կարևորագույն գործառնություններ, ինչպիսին է փաստեր գնահատելը ընդհանուր մարդկային և հասարակական շփումների փորձի և լույսի ներքո:

## **2. Անկողմնակալություն**

Անկողմնակալությունն ու անկախությունը սերտորեն փոխկապակցված են, սակայն չեն համընկնում: Որպես կանոն, անկախությունը ներառում է դատավոր-այլ սուբյեկտներ դաշտը, անկողմնակալությունը ենթադրում է դատավորի միակերպ վերաբերմունքը դատավարության տարբեր կողմերի նկատմամբ:

Անկողմնակալ պետք է լինի թե՛ դատավորի որոշումը, թե՛ որոշում կայացնելու ողջ գործընթացը: Անկողմնակալության առաջին նախապայմանը անկախությունն է: Դեռևս 1997թ.-ին *Կանադայի Գերագույն դատարանը հանդես է եկել «Տարածքային դատարանի*

*ակտով»*<sup>7</sup>, որում նշվում է, որ դատավորը կարող է լինել անկախ, սակայն կոնկրետ գործով դրսևորել կողմնակալություն, մինչդեռ եթե նա անկախ չէ, ոչ մի դեպքում անկողմնակալ լինել չի կարող:

Անկողմնակալությունը գնահատվում է **նոջամիտ դիտորդի** տեսանկյունից: Այսինքն, նոջամիտ դիտորդը, իրատեսորեն և գործնականորեն նայելով դատավարությանը, արդյոք կնկատի դատավորի կողմնապահություն: Քրեական դատավարությունում հարկ է ուշադրություն դարձնել նաև մեղադրյալի՝ դատավորի անկողմնակալության վերաբերյալ ընկալմանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը **1997թ. Գրեգորին ընդդեմ Միացյալ Թագավորության** գործի շրջանակներում<sup>8</sup> նշել է, որ գոյություն ունի անկողմնակալության երկու դաշտ՝ **սուբյեկտիվ և օբյեկտիվ**:

**Սուբյեկտիվ տեսանկյունից** դատարանն ու դատավորն իրենք պետք է անկողմնակալ լինեն, այսինքն չունենան կանխակալ վերաբերմունք, նախապաշարմունք: **Օբյեկտիվ տեսանկյունից** դատարանն ու դատավորը պետք է անկողմնակալի տպավորություն թողնեն այլ սուբյեկտների վրա: Նրանք իրենց գործունեությունը պետք է կազմակերպեն այնպես, որ բացառեն իրենց անկողմնակալության վերաբերյալ կասկածների առաջացումը:

ՄԻԵԴ-ը 1998թ.-ին **Կաստիլյո Ալգարն ընդդեմ Իսպանիայի գործով**<sup>9</sup> նշել է, որ որ ցանկացած դատավոր, ով իրավաչափորեն կկասկածվի կողմնակալ լինելու մեջ, պետք է դադարի պաշտոնավարել:

Կողմնակալությունը կարող է դրսևորվել **ֆիզիկապես կամ բանավոր**:

**Ֆիզիկապես** դրսևորման դեպքում հասկացվում է դեմքի արտահայտությունը, որը ցույց կտա անհավատություն, հեզմանք կամ անլրջություն: **Բանավորի** դեպքում հասկացվում է հեզմական արտահայտությունները, ոչ հարիր մականուններով անձանց դիմելը, կարծրատիպային հումորները, հումորը կապված սեռի, ռասայի կամ այլ հատկանիշի հետ, սպառնալից, թշնամական տոնը, վերաբերմունքը և այլն: Բայց հիշյալը որևէ կերպ չի սահմանափակում դատավորի անձնական կարծիքը:

<sup>7</sup> Կանադայի Գերագույն դատարանի «Տարածքային դատարանի ակտ», <<https://www.justice.gov.nt.ca/en/files/legislation/territorial-court/territorial-court.a.pdf>>

<sup>8</sup> Գրեգորին ընդդեմ Միացյալ Թագավորության գործը, <<https://www.refworld.org/cases/ECHR,3ae6b69f4.html>>

<sup>9</sup> Կաստիլյո Ալգարն ընդդեմ Իսպանիայի գործը, <<http://www.worldlii.org/eu/cases/ECHR/1998/99.html>>

Այս տեսանկյունից հետաքրքիր է երկու հարց. նախ՝ **զանգվածային լրատվամիջոցների հետ դատավորի շփումը, և ապա՝ նախկին քաղաքական գործունեության հետ կապված դատավորի կարգավիճակը:**

Լրագրողի իրավունքն ու պարտականությունը տարբեր պետական մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքումն ու այն հասարակությանը փոխանցելն է:<sup>10</sup> Սա, իհարկե, ներառում է նաև հանրային հնչեղություն վայելող դատական գործերին անդրադառնալը, արդարադատության իրականացման գործընթացը լուսաբանելը: Դատավորից պահանջվում է ձեռնպահ մնալ մամուլում տեղ գտած լուրերին հրապարակայնորեն անդրադառնալուց: Դատավորի դիրքորոշումը արտացոլվում է միայն և միայն կոնկրետ գործի շրջանակներում կայացված որոշումներով:

Անդրադառնալով քաղաքական կապերին, հարկ է նշել, որ մինչ դատավոր նշանակվելը անձը կարող է զբաղեցրած լինել տարատեսակ պաշտոններ, ներառյալ՝ քաղաքական, կարող է ծավալված լինել ակտիվ քաղաքական, կուսակցական գործունեություն:<sup>11</sup> Սա ինքնին դատավորի կողմնակալության մասին չի փաստում, սակայն ամեն դեպքում որոշ հանգամանքներում այն հաշվի է առնվում: Այս փուլում դատավորից ակնկալվում է, որպեսզի նա մի կողմ դնի կուսակցական շահերը, քաղաքական հավակնությունները և խուսափի ցանցակծ տեսակի շահերի բախումից:

### 3. Ազնվություն

Ազնվության բաղադրիչներից են՝ *անկեղծությունը, արդարամտությունը, ուղղամտությունը, դատավորական բարոյականությունը:*<sup>12</sup> Ազնվությունը չափեր ու չափման միավորներ չունի. այն բացարձակ է և ավելի քան անհրաժեշտ դատավորին:

Ազնվությունը, ի տարբերություն դատավորի իրավական կարգավիճակի մյուս տարրերի, դժվար է սպառիչ կերպով բացահայտել: Ժամանակի և տարածության մեջ ազնվության ընկալումները տարբերվում են:

<sup>10</sup> ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակի մեկնաբանություն, կետ 74, <[https://www.unodc.org/documents/corruption/publications\\_unodc\\_commentary-e.pdf](https://www.unodc.org/documents/corruption/publications_unodc_commentary-e.pdf)>

<sup>11</sup> ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակի մեկնաբանություն, կետ 88, <[https://www.unodc.org/documents/corruption/publications\\_unodc\\_commentary-e.pdf](https://www.unodc.org/documents/corruption/publications_unodc_commentary-e.pdf)>

<sup>12</sup> ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակի մեկնաբանություն, կետ 101, <[https://www.unodc.org/documents/corruption/publications\\_unodc\\_commentary-e.pdf](https://www.unodc.org/documents/corruption/publications_unodc_commentary-e.pdf)>



Հենց այդ պատճառով այստեղ նույնպես առաջ է գալիս ողջամիտ դիտորդի անհրաժեշտությունը:<sup>13</sup>

Մակայն, միայն ողջամիտ դիտորդի հույսին չմնալու համար իրավական պրակտիկայում ձևավորվել են ազնվության որոշակի չափանիշներ: Այստեղ շեշտը դրվում է ոչ թե բարոյական-ոչ բարոյական, ճիշտ-սխալ որոշման վրա, այլ ազնվությունը՝ դատավորի իրավական կարգավիճակի՝ այլ տարրերի լույսի ներքո ուսումնասիրելու վրա: Մրա պատճառն այն է, որ հասարակական կարծիքին բացարձակ նախապատվություն տալը կդառնա կամայականություն:

Ըստ այդմ, կոնկրետ փաստի առթիվ դատավորի ազնվությունը գնահատելիս, հաշվի են առնվում հետևյալ 6 գործոնները.

2. արարքի բնույթը. հանրային՞ է, թե՞ մասնավոր, արարքը հակասո՞ւմ է օրենքին, թե՞ ոչ.
3. դատավորի վարքի՝ որպես նրա անձնական իրավունքի, պաշտպանվածության աստիճանը.
4. դատավորի կողմից ցուցաբերած հայեցողության և հետևողականության աստիճանը.
5. դատավորի վարքի արդյունքում պատճառված վնասների աստիճանը և դրա հետևանքով վնաս կրած անձանց շրջանակը (օրինակ՝ դատավարության մասնակիցները, հասարակությունը).
6. հասարակության կամ նրա առանձին անդամների նկատմամբ դատավորի ցուցաբերած հարգանքի կամ անարգանքի աստիճանը.
7. դատավորի անաչառության, անկողմնակալության և դրա հետևանքով առաջացած ազդեցության աստիճանը:<sup>14</sup>

#### 4. Պատշաճություն

Դատավորի պատշաճությունը նրա գործունեության բոլոր ոլորտների և տեսակների հիմքում է, ընդ որում, թե՛ մասնագիտական, թե՛ անձնական պատշաճությունը:

<sup>13</sup> ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակի մեկնաբանություն, Գլուխ 3.1, <[https://www.unodc.org/documents/corruption/publications\\_unodc\\_commentary-e.pdf](https://www.unodc.org/documents/corruption/publications_unodc_commentary-e.pdf)>

<sup>14</sup> ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակի մեկնաբանություն, էջ 82, <[https://www.unodc.org/documents/corruption/publications\\_unodc\\_commentary-e.pdf](https://www.unodc.org/documents/corruption/publications_unodc_commentary-e.pdf)>

Իրականում, այստեղ կարևորվում է երկու գործոն. դատավորն ինչ է կատարել և դա ինչպես է ընկալվել հանրության կողմից: Օրինակ, դատավորը կարող է դատախազի հետ քննարկել պետության և իրավունքի առջև ծառայած խնդիրները, սակայն հանրությունը, և հատկապես՝ պաշտպանական կողմը դա ընկալի մեղադրանքի կողմին առավելության տրամադրում: Քանի որ հասարակությունը դատավորից ակնկալում է պատշաճ վարքագծի բարձր մակարդակ, դատավորը, երբ երկմտում է հավաքի գնալու, միջոցառման մասնակցելու, նվեր ընդունելու մասին, անպայման պետք է պատասխանը գտնի՝ կախված նրանից, թե ի՞նչ կմտածի հասարակությունը:

Դատավորը չպետք է ներգրավվի հանրային բանավեճերի մեջ: Պատճառն այն է, որ լինել դատավոր նշանակում է խնդրին նայել յուրահատուկ, առարկայական և դատական տեսանկյունից: Միաժամանակ, խրախուսվում է դատավորի մասնակցությունը իրավական խնդիրների քննարկումներին, լուծմանը, դասախոսություններին, գիտամանկավարժական գործունեության ծավալմանը՝ որտեղ վերջինս ներկայացնում է իրավական դիրքորոշում՝ իրավական խնդիրների վերաբերյալ:

Այս սահմանափակումներն ինքնանպատակ չեն: Բացի այն, որ դրանք ապահովում են դատավորի իրավական կարգավիճակի տարրերի գոյությունը, դրանք ունեն նաև կարևորագույն գործնական նշանակություն: Հենց այս սկզբունքներն են ծնունդ տվել դատավորի բացարկի և ինքնաբացարկի ինստիտուտին:

## 5. Հավասարություն

Դատավորը պետք է իրագեկ լինի և հասկանա հասարակության բազմազանության ու տարբերությունների մասին, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ ռասայի, գույնի, սեռի, կրոնի, ազգային ծագման, հաշմանդամության, տարիքի, ամուսնական կարգավիճակի, սեռական կողմնորոշման, սոցիալական և տնտեսական կարգավիճակի և նման այլ պատճառների մասին («ոչ համատեղելի հիմքեր»):

Դատավորը՝ իր պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում, բառերով կամ վարքագծով չպետք դրսևորի կողմնապահություն կամ նախապաշարմունք որևէ անձի կամ խմբի նկատմամբ՝ վերը թվարկված ոչ համատեղելի հիմքերով: Ընդ որում, հիշյալ կանոնները հավասարապես վերաբերում են դատավարության բոլոր մասնակիցներին, դատական կազմին և դատական համակարգի գործընկերներին:

## 6. Մասնագիտական պիտանելիություն և ջանասիրություն (due diligence)

Դատավորը պետք է տիրապետի իրավաբանական գիտելիքների, հմտությունների, 7 ունենա այլ անհրաժեշտ կարողություններ:<sup>15</sup> Իր պարտականությունների կատարման ընթացքում դատավորի մասնագիտական որակների բարձր մակարդակը պետք է ակնհայտ լինի: Հակառակ դեպքում՝ այս հատկանիշը կասկածի տակ դնելու դեպքում, իրավիճակի միակ լուծումը դատավորի լիազորությունների դադարեցումն է: Կարելի է ենթադրել, որ սա դատավորի անփոփոխելիության սկզբունքի դրսևորում է, առ այն, որ դատավորն անփոփոխելի է և կարող է փոփոխվել միայն հատուկ սահմանված հիմքերի առկայության դեպքում, տվյալ դեպքում՝ պահանջվող մասնագիտական որակներին չհամապատասխանելը:

Դատավորի մասնագիտությունը պահանջում է նոր հմտություններ մի շարք ոլորտներում, հետևապես բարձր մասնագիտական որակներ ունենալու համար անհրաժեշտ է պարբերաբար իրականացել դատավորների ուսուցման, վերապատրաստման միջոցառումներ:

Կախված նորանշանակ դատավորի մասնագիտական ունակությունների աստիճանից, դասընթացների բովանդակությունն ու ծավալը կարող են տարբերվել: Հարկ է ընդգծել, որ ուսուցման նյութը պետք է ներառի ոչ միայն իրավաբանական գիտելիքներ, այլ նաև սոցիալական, հասարակական այնպիսի երևույթների մասին գիտելիքներ, որոնց իմացությունն անհրաժեշտ է դատավորին՝ իր բարձր կարգավիճակին համապատասխան լիազորությունները պատշաճ կերպով իրականացնելու համար<sup>16</sup>:

Դատական գործունեության իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու, ֆինանսավորելու պարտականությունը կրում է պետությունը:

Այս տարրի վերջին բաղկացուցիչը՝ **ջանասիրություն** է: Մթափ դատելու, անկողմնակալ որոշում կայացնելու համար, դատավորը պետք է արդարադատության իրականացման գործում իր ջանքերը ներդնի:

<sup>15</sup> ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի «Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները», սկզբունք 4-րդ, <[https://www.unodc.org/pdf/crime/corruption/judicial\\_group/Bangalore\\_principles.pdf](https://www.unodc.org/pdf/crime/corruption/judicial_group/Bangalore_principles.pdf)>

<sup>16</sup> ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակի մեկնաբանություն, կեստ 157, <[https://www.unodc.org/documents/corruption/publications\\_unodc\\_commentary-e.pdf](https://www.unodc.org/documents/corruption/publications_unodc_commentary-e.pdf)>

Դատական իշխանության անկախության և դատավորի անփոփոխելիության սկզբունքը.

ԵԴԽԽ

2000թ-ին ԵԽ Նախարարների կոմիտեն հիմնեց Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը: Այստեղ ԵԽ անդամ բոլոր 47 պետությունները նշանակում են իրենց ներկայացուցիչներին, իսկ Մարմնի որոշումները խորհրդատվական բնույթի են:<sup>17</sup> Դատավորի իրավական կարգավիճակին անդրադարձ է կատարվել նաև ԵԴԽԽ «Դատական իշխանության անկախության և դատավորի անփոփոխելիության սկզբունքի մասին» կարծիքում:<sup>18</sup>

Ի թիվս արդեն իսկ քննարկվածների, նշված կարծիքում հատուկ շեշտադրվում է դատավորի անփոփոխելիության սկզբունքը: Ըստ այդմ, դատավորի պաշտոնավարությունը պետք է երաշխավորվի մինչև թոշակի անցնելու պարտադիր տարիքը կամ պաշտոնավարության սահմանված ժամկետի ավարտը:

Անփոփոխելիության սկզբունքի բացառությունների առկայությունը, հատկապես, եթե դրանք բխում են կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու պահանջից, անմիջականորեն հանգեցնում է այն մտքին, թե՛ ո՞ր մարմնի կողմից, կամ ի՞նչ մեթոդով և հիմքով դատավորը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության: Կարևոր է հստակ սահմանել այն արարքները, որոնց համար դատավորի լիազորությունները կարելի է դադարեցնել, և որ կարգապահական վարույթի ընթացակարգերը պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պատշաճ ընթացակարգի պահանջներին:

Պետությունները պետք է դիտարկեն օրենսդրությամբ հատուկ մարմին ստեղծելու հարցը, որը իրավասու է կիրառելու կարգապահական պատասխանատվության միջոցներ: Նման մարմնի որոշումները պետք է վերահսկվեն վերադաս դատական ատյանի կողմից, կամ այդ ատյանը պետք է հանդիսանա վերադաս դատական մարմին:

ԵԴԽԽ-ն գտնում է, որ դատավորների անփոփոխելիությունը պետք է լինի անկախության հստակ սահմանված տարր, որը պետք է սահմանվի ներպետական օրենսդրության ամենաբարձր մակարդակում:

<sup>17</sup> ԵԽ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ, <<https://edoc.coe.int/en/efficiency-of-justice/6817-the-consultative-council-of-euroepan-judges-ccje.html>>

<sup>18</sup> Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը՝ դատական իշխանության անկախության և դատավորի անփոփոխելիության սկզբունքի մասին, <<https://rm.coe.int/opinion-no-1-ccje-armenian-1-2001-16808e6440>>

Դատավորների կարգավիճակի մասին Եվրոպական Խարտիա

Դատավորի իրավական կարգավիճակի վերաբերյալ վերլուծություն կատարելիս առանձնակի կարևորվում է «Դատավորների կարգավիճակի մասին» 1998 թվականի հուլիսի 10-ի Եվրոպական խարտիան<sup>19</sup> և Եվրոպական խարտիայի պարզաբանման հուշագիրը:

*«Դատավորների կարգավիճակի մասին» 1998 թվականի հուլիսի 10-ի Եվրոպական խարտիան ունի պարտադիր բնույթ: Միաժամանակ այն հանդիսանում է ոչ թե որպես նպատակ, որպես միջոց: Այսինքն, Խարտիայի կարգավորումները պետության համար նվազագույն պահանջներ են, իսկ ավելի կարող է ապահովի պետությունը:*

Խարտիան առանձնացնում է դատավորի իրավական կարգավիճակի այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ **անկախությունը, անկողմնակալությունը, պատշաճությունը**: Ընդ որում, պարզաբանման հուշագիրը սահմանում է, որ Խարտիան երաշխավորում է հասարակության բոլոր անդամների իրավունքը՝ ակնկալել անկախ, անկողմնակալ և պատշաճ դատավոր ու դատարան: Իհարկե, դատավորը պետք է օժտված լինի նաև իրական կարողություններով: Այս համատեքստում դատավորի պատշաճ գործունեության համար պայմաններ ապահովելու պարտականությունը կրում է պետությունը՝ թե՛ օրենսդրական, թե՛ ինստիտուցիոնալ իմաստներով: Քննարկվող փաստաթուղթը հռչակում է նաև դատարանների հասանելիության, մատչելիության սկզբունքը, դատավորից պահանջում է պահպանել դատավարության բոլոր մասնակիցների նկատմամբ հարգանքի և օրենքով սահմանված տեղեկատվության գաղտնիության պահպանման մթնոլորտ:

Հետաքրքիր է Խարտիայի մոտեցումը դատավորի անփոփոխելիության հիմնահարցին: Մասնավորապես, Խարտիայի 1.3 հոդվածի համաձայն՝ դատավորի ընտրության, նշանակման, վերանշանակման կամ լիազորությունների դադարման կապակցությամբ որոշում ընդունող մարմինը պետք է օրենսդիր և գործադիր իշխանություններից անկախ լինի: Այս մարմնի անդամների առնվազն կեսը պետք է լինեն դատավորներ՝ ընտրված հենց դատավորների կողմից:<sup>20</sup> Հենց այս պատճառով էլ դատավորի անփոփոխելիության

<sup>19</sup> «Դատավորների կարգավիճակի մասին» 10.07.1998թ. Եվրոպական խարտիա և Եվրոպական խարտիայի պարզաբանման հուշագիր, <<https://rm.coe.int/16807473ef>>

<sup>20</sup> «Դատավորների կարգավիճակի մասին» 10.07.1998թ. Եվրոպական խարտիա և Եվրոպական խարտիայի պարզաբանման հուշագիր, հոդված 1.3, <<https://rm.coe.int/16807473ef>>

սկզբունքի դեմ գնացող ցանկացած գործողություն պետք է քննության առնվի նշված անկախ մարմնում: Այս սկզբունքի տարրերից է նաև դատավորին այլ դատարան կամ այլ դատական պաշտոնի տեղափոխելու անթույլատրելիությունը, բացառությամբ այն դեպքի, երբ դատավորը տվել է իր համաձայնություն: Ընդ որում, Խարտիան չի խոսում մարմնի ոչ դատավոր մասին:

Այսինքն այս հարցում Եվրոպան որդեգրել է այն պրակտիկան, որի դեպքում դատավորի նշանակումից սկսած մինչ նրա լիազորությունների դադարումը, պաշտոնավարման հետ կապված բոլոր հարցերը կարգավորվում են մեկ, անկախ, դատավորների լայն ներկայացվածությամբ մարմնի կողմից: Առանձնակի կարևորվում է այն հանգամանքը, որ կարգապահական վարույթի կայացված որոշումը պետք է հնարավոր լինի բողոքարկել առավել բարձր դատական աստիճանի: Բողոքը քննող աստիճանի մասին Խարտիան լռում է, քանզի տարբեր պետություններում դատական մարմինների ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ տարբերություններից ելնելով խնդիրը կարող է տարբեր կերպ լուծվել:<sup>21</sup>

### **Միջազգային փաստաթղթերի ամփոփում**

Դատավորի իրավական կարգավիճակի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ 1980թ.-ից դատավորից պահանջվող այս կամ այն հատկանիշը ժամանակավրեպ չէ նույնիսկ մեր օրերում, որը վկայում է երկու փաստի մասին:

**Նախ՝** դատելու արվեստը միշտ գոյություն է ունեցել և շարունակելու է իր գոյությունը, հետևաբար, այնպիսի առանցքային հարցերի, ինչպիսին է դատավորի իրավական կարգավիճակը, հիմքերը վաղուց նախանշված են: Ընդամենն անհրաժեշտ է իրավունքի և պահանջների զարգացմանը համահունչ դրանք վերանայել և համապատասխանեցնել հասարակական հարաբերությունների կարիքներին, աշխարհի փոփոխություններին:

**Ապա՝** մարդկության՝ իրապես արդարության և արդարադատության հասնելու ձգտումը ստիպում է շարունակել պահպանել անկախ, անկողմնակալ, ազնիվ, քաղաքականապես չեզոք, պատշաճ, ջանասեր դատավորի կերպարը:

---

<sup>21</sup> «Դատավորների կարգավիճակի մասին» 10.07.1998թ. Եվրոպական խարտիա և Եվրոպական խարտիայի պարզաբանման հուշագիր, հոդված 5.1, <<https://rm.coe.int/16807473ef>>

## 1.2. Դատավորի իրավական կարգավիճակի վերաբերյալ միջազգային փորձը

Զեկույցի այս մասում կքննարկվի նախադեպային և ռոմանդերմանական իրավական համակարգ ունեցող 16 երկրների փորձը՝ դատավորի իրավական կարգավիճակի հարցում:

### 1. Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Դեռևս 1878թ.-ին ընդունված ԱՄՆ Սահմանադրությունը<sup>22</sup> դատավորի իրավական կարգավիճակին խիստ մասամբ է անդրադառնում:

Սահմանադրության 3-րդ հոդվածը նվիրված է դատական իշխանությանը: Հոդվածի միայն առաջին մասն է խոսում դատավորի իրավական կարգավիճակի մասին: Դրա համաձայն՝ դատարանների՝ ներառյալ Գերագույն դատարանի դատավորներն իրականացնում են իրենց լիազորությունները բարեվարքության կանոնների շրջանակներում, և մատուցած ծառայությունների համար սահմանված ժամկետում ստանում են վարձատրություն, որն իրենց պաշտոնավարման ընթացքում չի կարող կրճատվել:

Նշված նորմում, փաստացի, ընդգծվում են դատավորի իրավական կարգավիճակի երկու կարևոր տարրերը՝ **բարեվարքությունը և կարգավիճակին համապատասխան վարձատրություն ստանալը:**

Բարեվարքությունը սկզբունքները արժեքների ամբողջություն է: Այն գնահատողական հասկացություն է, ուստի դժվար է տալ դրա կոնկրետ սահմանումը: Սակայն, իրավաբանական գրականության մեջ, ինչպես նաև հենց ԱՄՆ-ի օրինակով, այն ընկալվում է որպես օրենքներով, Սահմանադրությամբ առաջնորդվելու վարքագիծ: Այսպես, ԱՄՆ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրությունը, դրա հիման վրա ընդունված օրենքները և կնքված միջազգային պայմանագրերը կազմում են երկրի բարձրագույն իրավունքը, և բոլոր նահանգների դատավորները առաջնորդվում են դրանցով. ներնահանգային օրենսդրությամբ չի կարող սահմանվել այս դրույթին հակասող կարգավորում: Սրանով, ըստ էության, ամրագրվում է դատավորի՝ Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան գործելու պարտավորությունը: Բացի այդ, ԱՄՆ Դատարանների պաշտոնական կայքում

<sup>22</sup> ԱՄՆ Սահմանադրություն, <<https://constitutionus.com/>>

հրապարակված հոդվածը<sup>23</sup> Սահմանադրությամբ նախատեսած դատավորի բարեվարքության կանոնը փոխկապում է նրա անփոփոխելիության հետ, մասնավորապես նշելով, որ դատավորները կարող են հեռացվել պաշտոնից միայն սահմանված հիմքերով:

Սահմանադրությունից զատ, դատավորի իրավական կարգավիճակը կարգավորվում է 1973թ. ընդունված և մինչ օրս բազում փոփոխությունների ենթարկված Միացյալ Նահանգների դատավորների վարքագծի կանոնագրքով<sup>24</sup>, որը պարունակում է էթիկայի կանոններ դատավորների թե՛ պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում, թե՛ դրանցից դուրս:

**Առաջին կանոնի** համաձայն դատավորն անկախ է ու անաչառ, որոշում կայացնելիս առաջնորդվում է օրենքով: Դատական գործունեություն իրականացնելիս և դրանից դուրս դատավորը պահպանում է անձնական անաչառության սկզբունքը:<sup>25</sup>

**Երկրորդ կանոնը** հռչակում է դատավորի պատշաճության սկզբունքը: Այն դատավորին պարտավորեցնում է զերծ մնալ ցանկացած իրավիճակից, որը կարող է կասկածի տակ դնել նրա ազնվությունը, անաչառությունը, անկողմնակալությունը, իր պաշտոնին համապատասխանությունը: Դատավորը չպետք է թույլ տա, որ ընտանեկան, սոցիալական, քաղաքական կամ ֆինանսական գործոններն ազդեն իր որոշումների կայացման վրա:<sup>26</sup>

**Երրորդ կանոնն է՝** արդարությունը, անկողմնակալությունը, ջանասիրությունը: Մրա ներքո Կանոնագիրքը դատավորին պարտավորեցնում է որոշում կայացնել առանց կաշկանդվելու հանրային կարծիքից և քննադատությունից, միաժամանակ՝ ցուցաբերել համբերություն, արժանապատվություն և հարգանք ցուցաբերեն դատավարության բոլոր մասնակիցների նկատմամբ: Դատավորներին թույլատրված չէ ընթացիկ գործերի վերաբերյալ ՋԼՄ-ներին մեկնաբանություններ տալ:<sup>27</sup>

**Չորրորդ կանոնը** վերաբերվում է արտադատական գործունեությանը և խրախուսում է դատավորների մասնակցությունը բարեգործական, կրթական, կրոնական, սոցիալական, ֆինանսական, դաստիարակչական գործողություններին: Դատավորն ազատ է գրել, խոսել

<sup>23</sup> Հոդվածը հասանելի է՝ <https://www.uscourts.gov/judges-judgeships/about-federal-judges>

<sup>24</sup> Միացյալ Նահանգների դատավորների վարքագծի կանոնագիրք, <<https://www.uscourts.gov/judges-judgeships/code-conduct-united-states-judges>>

<sup>25</sup> Միացյալ Նահանգների դատավորների վարքագծի կանոնագիրք, <[https://www.uscourts.gov/sites/default/files/code\\_of\\_conduct\\_for\\_united\\_states\\_judges\\_effective\\_march\\_1\\_2\\_2019.pdf](https://www.uscourts.gov/sites/default/files/code_of_conduct_for_united_states_judges_effective_march_1_2_2019.pdf)> Կանոն 1, տե՛ս նույն տեղում:

<sup>26</sup> Միացյալ Նահանգների դատավորների վարքագծի կանոնագիրք, Կանոն 2, տե՛ս նույն տեղում:

<sup>27</sup> Միացյալ Նահանգների դատավորների վարքագծի կանոնագիրք, Կանոն 3, տե՛ս նույն տեղում:



և դասավանդել ինչպես իրավաբանական և այլ թեմաներով: Անշուշտ, այս ազատությունը բացարձակ չէ և ավարտվում է մյուս կանոններով սահմանված պահանջներով:<sup>28</sup>

Եվ վերջին՝ **հինգերորդ կանոնը**<sup>29</sup> սահմանում է դատավորի ապաքաղաքականացվածության սկզբունքը: Մասնավորապես՝ դատավորը չի կարող լինել կուսակցության ղեկավար, հանդես գալ, ելույթ ունենալ որևէ կուսակցության օգտին: Քաղաքական պաշտոնի հավակնելու դեպքում դատավորը պարտավոր է վայր դնել իր լիազորությունները:

Հատկանշական է, որ հինգերորդ կանոնը, սահմանելով ապաքաղաքականացվածության սկզբունք, այնուամենայնիվ չի անդրադառնում պարզապես կուսակցության անդամ լինելու և ակտիվ կուսակցական գործունեության չծավալելու խնդրին: Այսինքն, կուսակցության անդամակցելու արգելք չկա:

## 2. Կանադա

Կանադայի դեպքում դժվար է գտնել մեկ օրենսդրական աղբյուր, որը հստակ կսահմանի դատավորի իրավական կարգավիճակը: Նախադեպային իրավունքի զարգացմանը զուգընթաց մի շարք հարցեր օրենսդրական մակարդակում կարգավորում չեն գտել: Ղեկավարվելով Կանադայի Սահմանադրությամբ,<sup>30</sup> դրա մաս կազմող, սակայն անգլիական իրավական ծագման «Հիմնադրման» ակտով, «Դատավորների մասին» ակտով, 1985թ. Վրլենթեյնի գործով,<sup>31</sup> 2001թ. Ռիչարդ Թերիլնի գործով,<sup>32</sup> ստորև մեկտեղվել է Կանադայում դատավորի իրավական կարգավիճակի տարրերը: Դրանք են.

- անկախություն.
- ֆինանսական ապահովվածություն, որը ստացվում է պետության հաշվին (*այստեղ վերլուծությունը հանգում է դատավորին իր բարձր կարգավիճակին համապատասխան վարձատրելուն*),
- անփոփոխելիություն.

<sup>28</sup> Միացյալ Նահանգների դատավորների վարքագծի կանոնագիրք, Կանոն 4, տե՛ս նույն տեղում:

<sup>29</sup> Միացյալ Նահանգների դատավորների վարքագծի կանոնագիրք, Կանոն 5, տե՛ս նույն տեղում:

<sup>30</sup> Կանադայի Սահմանադրություն, <<https://laws-lois.justice.gc.ca/eng/const/>>

<sup>31</sup> Կանադայի Գերագույն դատարանի Վրլենթեյն ընդդեմ Դր Գուինի (Valente v. The Queen) գործը <<https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/108/index.do>>

<sup>32</sup> Կանադայի Գերագույն դատարան Ռիչարդ Թերիլնի ընդդեմ Արդարադատության Նախարարության գործը, <<https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/1872/index.do>>

- վարչական անկախություն, որը ենթադրում է դատավորի՝ դատարանի կազմում իշխանության այլ ճյուղերից անկախանալուն,
- անձեռնմխելիություն.
- հանրության առջև պատասխանատվության և պարտաճանաչության բարձր մակարդակ:

### 3. Ուկրաինա

Ուկրաինայի Սահմանադրության<sup>33</sup> 126-127 հոդվածները հռչակում են դատավորի իրավական կարգավիճակի հետևյալ տարրերը. **անկախություն, անձեռնմխելիություն, անփոփոխելիություն, մասնագիտական պիտանելիություն:** Նաև նշվում է, որ դատավորը ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքներին:

Սահմանադրության 92-րդ հոդվածի 14-րդ մասի իմաստով դատավորի իրավական կարգավիճակի մասին այլ դրույթները սահմանվում են օրենքով: Այսպիսին հանդիսանում է «Դատական համակարգի և դատավորի իրավական կարգավիճակի մասին» օրենքը:<sup>34</sup> Դրա 1-ին հոդվածի 1-ին մասը առանձնացնում է դատարանի անկախության և անկողմնակալության սկզբունքը, իսկ 2-րդ մասը՝ դատավորի մասնագիտական պիտանելիությունը: Նույն օրենքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին կետը դատավորին պարտավորեցնում է գործել պահպանելով արդարություն, անկողմնակալություն, հետևել իրավական պրակտիկային, պահպանել դատական վարքագծի կանոնները: Այս կանոնները զետեղված են Ուկրաինայի «Դատական վարքագծի օրենսգրքում»<sup>35</sup>: Օրենսգիրքը բաղկացած է 20 հոդվածից, որոնց համալիր ուսումնասիրության արդյունքում առանձնացնում ենք Ուկրաինայի դատավորի իրավական կարգավիճակի ներքոնշյալ տարրերը.

- անկախություն.
- անկողմնակալությունը.
- արդարություն.

<sup>33</sup> Ուկրաինայի Սահմանադրություն,

<[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/ukraine/ukrain-e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/ukraine/ukrain-e.htm)>

<sup>34</sup> «Դատական համակարգի և դատավորի իրավական կարգավիճակի մասին» Ուկրաինայի օրենք, <[https://www.legislationline.org/download/id/7029/file/Ukraine\\_law\\_judiciary\\_status\\_of\\_judges\\_2016\\_en.pdf](https://www.legislationline.org/download/id/7029/file/Ukraine_law_judiciary_status_of_judges_2016_en.pdf)>

<sup>35</sup> Ուկրաինայի «Դատական վարքագծի օրենսգիրք», <[https://newjustice.org.ua/wp-content/uploads/2018/06/Code\\_of\\_Judicial\\_NEW\\_eng1.pdf](https://newjustice.org.ua/wp-content/uploads/2018/06/Code_of_Judicial_NEW_eng1.pdf)>

- ազնվություն.
- օրենքներին և իրավունքի գերակայությանը խստագույնս ենթարկվելը.
- անբասիր պատշաճություն.
- ջանասիրություն.
- քաղաքական գույլաձուլություն, որը բավականին լայն է ընկալվում *(սա վերաբերում է ոչ միայն քաղաքական հայացքները հրապարակայնորեն արտահայտելու, այլ՝ այս կամ այն ուժի օգտին հանդես գալու մասին, նաև արգելվում է անդամակցել որևէ կուսակցության)*.
- պաշտոնի անհամատեղելիություն *(արգելվում է զբաղվել այլ տեսակի վճարովի գործունեությամբ, բացի գիտամանկավարժական և մշակութային)*.
- հրապարակայնորեն հանդես գալու սահմանափակումներ:

#### 4. Էստոնիա

Էստոնիայի Սահմանադրության<sup>36</sup> 146-րդ հոդվածը խոսում է դատարանի անկախության, միայն Սահմանադրությանը և օրենքներին ենթարկվելու մասին: 147-րդ հոդվածի համաձայն էլ՝ դատավորն անփոխարինելի է, նրա իրավական կարգավիճակը և անկախության երաշխիքները սահմանվում են օրենքով: Այդպիսին հանդիսանում է «Դատարանների» Ակտը,<sup>37</sup> որի 9-րդ ու 10-րդ գլուխներում կարելի է գտնել դատավորի իրավական կարգավիճակի այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ **անկողմնակալությունը, պատշաճությունը, մասնագիտական բարձր որակները, հարիւր վարձատրություն ստանալը:** Դատավորի իրավական կարգավիճակի այլ մանրամասները գետեղված են Դատավորների էստոնական Ասոցիացիայի «Վարքագծի կանոններում»<sup>38</sup>, որի 32 հոդվածների վերլուծության արդյունքում հանգում ենք նրան, որ դատավորի իրավական կարգավիճակի տարրերն են.

- անկախություն.
- անկողմնակալություն.
- ազնվություն.

<sup>36</sup> Էստոնիայի Սահմանադրություն,

<[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/estonia/estoni-e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/estonia/estoni-e.htm)>

<sup>37</sup> Էստոնիայի Դատարանների Ակտ, <<https://www.riigiteataja.ee/en/eli/ee/514022014001/consolide>>

<sup>38</sup> Դատավորների էստոնական Ասոցիացիայի «Վարքագծի կանոններ», <<https://www.riigikohus.ee/en/estonian-court-system/estonian-judges-code-ethics>>

- օրինապահ քաղաքացու օրինակ լինելը.
- գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվելը.
- այլ գործընկերներին՝ իրենց ոչ պատշաճ վարքագծի մասին տեղեկացնելը *(սա վերաբերում է այն դեպքերին, երբ դատավորն այլ դատավորի վարքագծում նկատում է Սահմանադրությանը, վերը նշված օրենքին և կանոններին հակասող վարքագիծ: Բացի դատավորին տեղեկացնելուց, դատավորը կարող է այդ մասին իրազեկել նաև Ասոցիացիային: Սակայն Էստոնիայում Դատավորների Ասոցիացիան կարգապահական վարույթներ չի հարուցում: Ուստի այս պահանջի վերջնական հասցեատերը հանդիսանում է Էստոնիայի Գերագույն դատարանի Կարգապահական պալատը, որին այս լիազորությունը տրված է Էստոնիայի՝ Դատարանների ակտով):<sup>39</sup>*
- քաղաքական գապվածություն.
- մասնագիտական որակների շարունակական բարելավում.
- պատշաճություն.
- արդարադատություն իրականացնելիս ողջամիտ ժամկետների պահպանում:

## 5. Լիտվա

Լիտվայի Սահմանադրության<sup>40</sup> 109-րդ հոդվածը դատավորի իրավական կարգավիճակի տարրերից նշում է **անկախությունն ու միայն օրենքին ենթարկվելը**: 113-րդ հոդվածը խոսում է օրենքով սահմանված **վարձատրության մասին**: Նույն հոդվածով դատավորին **արգելվում է մասնակցել կուսակցությունների կամ այլ քաղաքական կազմակերպությունների գործունեությանը**: Լատվիայում դատավորի իրավական կարգավիճակի կարգավորումները չենք սահմանափակվում Սահմանադրությամբ: Այսպես, «Դատարանների մասին» Լիտվայի օրենքի<sup>41</sup> 3-րդ հոդվածը նշում է **անկախությունը, անկողմնակալությունը, միայն օրենքին ենթարկվելը և սոցիալական ապահովվածությունը՝** որպես դատավորի իրավական կարգավիճակի տարրեր:

<sup>39</sup> Էստոնիայի Դատարանների Ակտ, <<https://www.riigiteataja.ee/en/eli/ee/514022014001/consolide>>

<sup>40</sup> Լիտվայի Սահմանադրություն,

<[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/litva/litold-e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/litva/litold-e.htm)>

<sup>41</sup> «Դատարանների մասին» Լիտվայի օրենք,

<[https://www.legislationline.org/download/id/6969/file/Lithuania\\_law\\_on\\_courts\\_1994\\_Am2008\\_en.pdf](https://www.legislationline.org/download/id/6969/file/Lithuania_law_on_courts_1994_Am2008_en.pdf)>

Սահմանադրության 10-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է դատավորների համար կազմակերպվող մասնագիտական վերապատրաստումներին, ինչն ակնհայտ է դարձնում նաև մասնագիտական որակների և դրանց անընդհատ զարգացման սկզբունքի առկայությունը:

Սահմանադրության 43-րդ հոդվածը դատավորին պարտավորեցնում է լիազորությունների իրականացման ընթացքում հետևել «Դատական վարքագծի կանոններին»:<sup>42</sup> Ըստ այդմ՝ դատավորից պահանջվում է.

- մարդու նկատմամբ հարգանք.
- պետության նկատմամբ հարգանք և հավատարմություն.
- արդարություն և անկողմնակալությունը.
- անկախություն.
- գաղտնիության կանոնների պահպանում.
- թափանցիկություն և հրապարակայնություն.
- ազնվություն և անձնագոհություն.
- պարկեշտություն.
- օրինակելիություն.
- նրբանկատություն.
- համերաշխություն.
- մասնագիտական որակների շարունակական բարելավում:

## 6. Լատվիա

Լատվայի Սահմանադրության<sup>43</sup> 83-րդ հոդվածը հռչակում է դատավորի **անկախության և միայն օրենքին ենթարկվելու սկզբունքը**: Մանրամասները սահմանված են օրենսդրությամբ: Ըստ այդմ՝ «Դատական իշխանության մասին» Լատվիայի օրենքի<sup>44</sup> 56-րդ հոդվածն անդրադառնում է դատավորի իրավական կարգավիճակի տարրերից **անկախությանը, անկողմնակալությանը, դատավորի բարձր պատվին ու արժանապատվությանը, քաղաքական գործունեության չձախախտմանը, արդարությանը**:

<sup>42</sup> Լիտվայի «Դատական վարքագծի կանոններ», <[http://www.judicial-ethics.umontreal.ca/en/codes%20enonces%20deonto/documents/Code\\_lituanie.pdf](http://www.judicial-ethics.umontreal.ca/en/codes%20enonces%20deonto/documents/Code_lituanie.pdf)>

<sup>43</sup> Լատվիայի Սահմանադրություն, <[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/latvia/latold-e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/latvia/latold-e.htm)>

<sup>44</sup> «Դատական իշխանության մասին» Լատվիայի օրենք, <<https://www.refworld.org/docid/4c3c45222.html>>

Դատավորները պետք է հետևեն նաև «Դատական վարքագծի կանոնները»,<sup>45</sup> որի ուսումնասիրության արդյունքում եզրահանգում ենք հետևյալին.

- դատավորը պետք է հարգի իր պաշտոնը, անկախությունը.
- դատական համակարգը միասնական է.
- դատավորը պետք է պահպանի պատշաճություն.
- դատավորը կատարում է պարտականությունները անաչառորեն և ջանասիրաբար.
- դատավորը հավասարակշռում է իր պաշտոնեական և անձնական գործունեությունը՝ բացառելով իր վրա ցանկացած տեսակի ազդեցություն.
- դատավորը քաղաքականապես չեզոք է:

## 7. Գերմանիա

Գերմանիայի Դաշնության Հիմնական օրենքը<sup>46</sup>՝ Սահմանադրությունը, ընդունվել է 1949թ.-ին: Դատավորի իրավական կարգավիճակին անդրադառնում են դրա 97-րդ և 98-րդ հոդվածները: Մասնավորապես՝ առանձնացվում են դատավորի **անկախությունը, միայն օրենքին ենթարկվելը, անփոփոխելիությունը**: Մանրամասները սահմանված են օրենքներով: Դատավորի իրավական կարգավիճակը մանրամասնվում է Գերմանիայի Դատական Փաստաթղթում<sup>47</sup>:

Մասնավորապես անդրադարձ է կատարվում դատավորի՝

- անկախությանը
- դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի գործունեությամբ զբաղվելուն.
- միայն օրենքին ենթարկվելուն.
- մասնագիտական պատշաճ որակների տիրապետմանը:

Քննարկվող փաստաթուղթն առավելապես կարգավորում է դատավորի նշանակման, դատական գործունեության կազմակերպման հարցերը: Ո՛չ Հիմնական օրենքը, ո՛չ Դատական փաստաթուղթը այլ երկրների նման չեն սահմանել դատավորի իրավական կարգավիճակի բոլոր տարրերը: Գերմանիայում չկա դատավորի վարքագծի կանոնագիրք: Սակայն սա չի կարելի համարել թերի կարգավորում՝ հաշվի առնելով այն հանգամանքը,

<sup>45</sup> Լատվիայի «Դատական վարքագծի կանոններ», <<http://www.at.gov.lv/en/tieslietu-padome/tiesnesu-pasparvaldes-institucijas/tiesnesu-etikas-komisija>>

<sup>46</sup> Գերմանիայի Դաշնության Սահմանադրություն, <<https://www.btg-bestellservice.de/pdf/80201000.pdf>>

<sup>47</sup> Գերմանիայի Դատական Փաստաթուղթ, <[http://www.gesetze-im-internet.de/englisch\\_drig/](http://www.gesetze-im-internet.de/englisch_drig/)>

Գերմանիան ԵՄ-ում ունի առանցքային դեր, ենթադրվում է, որ Եվրոպայի Խորհրդի ընդունած ցանկացած փաստաթուղթ համապատասխանում է Գերմանիայի իրավական քաղաքականությանը:

## 8. Ֆրանսիա

Ֆրանսիայի Սահմանադրության<sup>48</sup> 64-րդ հոդվածից բխում է, որ դատավորն անկախ և անփոփոխելի է, իսկ վարքագծի կանոնները սահմանված են օրենսդրական մակարդակով: Սակայն իրավական գրականության մեջ գործում է դատավորի իրավական կարգավիճակի եռատարրության սկզբունքը: Այդ երեք տարրերն են.

- անկախություն.
- անկողմնակալություն.
- ազնվություն:

Երեքն էլ ֆրանսիական արտասանությամբ սկսվում են լատինատառ Ի-ով, այդ պատճառով հայտնի է «երեք Ի» անվանումը:<sup>49</sup>

## 9. Լեհաստան

Լեհաստանի Սահմանադրության<sup>50</sup> 173-րդ հոդվածը հռչակում է դատարանների անկախությունը: 178-րդ հոդվածն իր 3 մասերով ամրագրում է դատավորի **անկախությունը, իր բարձր կարգավիճակին համապատասխան վարձատրություն ստանալը և քաղաքական զսպվածությունը**, որը վերաբերվում է հարցի ինչպես ակտիվ, այնպես էլ՝ պասիվ կողմին: Այսինքն, արգելվում է նույնիսկ լինել կուսակցության անդամ: Սահմանադրության 180-րդ հոդվածի համաձայն **դատավորն անփոփոխելի է:**

«Դատարանների մասին» օրենքի<sup>51</sup> միայն 106-րդ հոդվածն է առնչվում դատավորի իրավական կարգավիճակին՝ նշելով տարրերից միայն անկախությունն ու միայն Սահմանադրությանը և օրենքին ենթարկվելը:

<sup>48</sup> Ֆրանսիայի Սահմանադրություն,

<[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/france/france-e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/france/france-e.htm)>

<sup>49</sup> Լիտվայի Վիտատուս Սագնուսի համալսարանի հետազոտական աշխատանք, Գլուխ 3, էջ 110, <[https://www.vdu.lt/cris/bitstream/20.500.12259/35727/1/ISSN2029-0454\\_2017\\_V\\_10\\_1.PG\\_90-123.pdf](https://www.vdu.lt/cris/bitstream/20.500.12259/35727/1/ISSN2029-0454_2017_V_10_1.PG_90-123.pdf)>

<sup>50</sup> Լեհաստանի Սահմանադրություն, <<https://www.sejm.gov.pl/prawo/konst/angielski/kon1.htm>>

<sup>51</sup> «Դատարանների մասին» Լեհաստանի օրենք, <<http://www.krs.pl/en/legal-acts.html>>

Դատավորի իրավական կարգավիճակի մասին առավել մանրամասն խոսվում է Ազգային դատական խորհրդի կողմից ընդունված «Դատավորների մասնագիտական վարքագծի սկզբունքների ժողովածուում»:<sup>52</sup> 2-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը պետք է գործի ելնելով **ազնվության, անկողմնակալության, արժանապատվության, պատվի և պարտականությունների պատշաճագույնս կատարման սկզբունքներից**: Լեհաստանում նույնպես, ինչպես Էստոնիայում, դատավորը իր գործընկերների մոտ նկատելով Սահմանադրության, «Դատարանների մասին» օրենքի և քննարկվող ժողովածուի դրույթների խախտումներ, պետք է այդ մասին զգուշացնի տվյալ գործընկերոջը, իրավունք ունի ահազանգել նաև պատկան մարմին՝ Ազգային դատական խորհրդին: Ազգային դատական խորհուրդը Լեհաստանում սահմանադրական կարգավիճակ ունեցող մարմին է, որի դերը դատավորների և դատարանների անկախության պահպանումն է:

## 10. Ավստրիա

Ավստրիայի Սահմանադրության<sup>53</sup> 87-րդ հոդվածի համաձայն՝ դատավորն իր մասնագիտական պարտականությունները կատարելիս անկախ է: Սահմանադրության տարբեր հոդվածներ դատավորի մասին հիշատակելիս օգտագործում են «համապատասխան մասնագիտական որակներով օժտված» արտահայտությունը: Մրանից եզրակացնում ենք, որ կարևորվում է նաև դատավորի **մասնագիտական պիտանելիությունը**:

Ավստրիայի պարագայում դատավորի իրավական կարգավիճակի վերաբերյալ օրենսդրական կարգավորումը բացակայում է: Ոլորտը կարգավորվում է Ավստրիայի Դատավորների Ասոցիացիայի կողմից ընդունված «Դատական վարքագծի հռչակագրով», «Վարքագծի Ուելսյան հռչակագրով» և «Դատավորի և դատախազության ծառայությունների մասին ակտով»: Նշենք, որ Ասոցիացիայի դերը սահմանափակվում է վարքագծի կանոններ սահմանելով, այն չի համընկնում այլ երկրներում գործող դատական խորհուրդների հետ, քանզի չունի դատական համակարգի անկախությանն առնչվող այլ լիազորություններ:

Ակտի համաձայն դատավորը՝

<sup>52</sup> Լեհաստանի Դատավորների մասնագիտական վարքագծի սկզբունքների ժողովածու», <<http://www.krs.pl/en/legal-acts.html>>

<sup>53</sup> Ավստրիայի Սահմանադրություն, <[http://constitutionnet.org/sites/default/files/Austria%20\\_FULL\\_%20Constitution.pdf](http://constitutionnet.org/sites/default/files/Austria%20_FULL_%20Constitution.pdf)>



- անկախ է.
- ազատ, որոշում է կայացնում՝ հիմնվելով իր ներքին համոզմունքի վրա.
- անփոփոխելի.
- ենթարկվում է միայն Սահմանադրությանն ու օրենքներին.
- ունի հատուկ սահմանադրաիրավական կարգավիճակ, անձեռնմխելի է.
- ստանում է իր պաշտոնին և կարգավիճակին համապատասխան վարձատրություն:

## 11. Իտալիա

Իտալիայի Սահմանադրության<sup>54</sup> երկու հոդվածներ նվիրված են դատավորի իրավական կարգավիճակին: 87-րդ հոդվածը հռչակում է **դատավորի անկախությունը**, 107-րդը՝ **անփոփոխելիությունը**:

1993թ. իտալական Կառավարությունը որոշում (դեկրետ) ընդունեց, համաձայն որի՝ հանրային ծառայության բոլոր ոլորտների համար պետք է ընդունվեին վարքագծի կանոնագրքեր: Այսպիսով, 1994թ. Դատավորների ասոցիացիան ընդունեց «Դատական վարքագծի կանոնագիրքը<sup>55</sup>»: Այս Ասոցիացիան կարգավորում է նաև դատախազների վարքագծի կանոնները, սակայն դատական համակարգին առնչվող այլ լիազորություններ չունի:

Այն երեք մասերից բաղկացած փաստաթուղթ է, որն ընդհանրությամբ դատավորից պահանջում է.

- արժանապատվություն.
- կոռեկտություն, պարկեշտություն, դատավարության մասնակիցների նկատմամբ հարգանք.
- անձնական ոչ եսասիրություն.
- անկախություն.
- անկողմնակալություն.
- լրատվամիջոցների հետ պատշաճ հաղորդակցում.
- արտապաշտոնեական պատշաճություն:

<sup>54</sup> Իտալիայի Սահմանադրություն,

<[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/italy/italy--e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/italy/italy--e.htm)>

<sup>55</sup> Իտալիայի «Դատական վարքագծի կանոնագիրքը», <[http://www.judicial-ethics.umontreal.ca/en/codes%20enonces%20deonto/documents/CODE\\_ITALIEN.pdf](http://www.judicial-ethics.umontreal.ca/en/codes%20enonces%20deonto/documents/CODE_ITALIEN.pdf)>

## 12. Վրաստան

Վրաստանի Սահմանադրության<sup>56</sup> 84-րդ հոդվածն իր երեք մասերով խոսում է դատավորի **անկախության, անփոփոխելիության և քաղաքական զսպվածության** մասին: 87-րդ հոդվածի ուժով դատավորն ունի **անձնական անձեռնմխելիություն**:

«Դատարանների մասին» Վրաստանի օրենքը<sup>57</sup> Դատավորների ժողովին լիազորել է ընդունել դատավորի վարքագծի կանոններ՝ հիմվելով Արդարադատության բարձրագույն խորհրդի առաջարկների վրա: Վրաստանում դատավորից պահանջվում է.

- անձնական և մասնագիտական բարձր գիտակցության մակարդակ.
- անկախություն.
- անկողմնակալություն.
- արդարություն.
- անձնական և մասնագիտական բարի համբավ.
- մասնագիտական գիտելիքների և հմտությունների բարձր մակարդակ:

## 13. Ալբանիա

Ալբանիայի Սահմանադրության<sup>58</sup> 142-145-րդ հոդվածներով կարգավորվում է դատավորի իրավական կարգավիճակի հարցը: Մասնավորապես, նշվում է դատավորի **անկախության, անկողմնակալության, այլ պետական կամ քաղաքական պաշտոններ զբաղեցնելու արգելքի և օրենքով սահմանված վարձատրության մասին**:

«Դատական իշխանության կազմակերպման մասին» Ալբանիայի օրենքի<sup>59</sup> 4-րդ գլուխը կրում է «Դատավորի կարգավիճակը» վերտառությունը, և ամրագրում դատավորի իրավական կարգավիճակը:

Հարկ է նշել, որ ի տարբերություն սույն զեկույցում քննարկված այլ երկրների փորձի, Ալբանիայի դեպքում նշված օրենքը բավականին բովանդակալից է ներկայացնում դատավորի իրավական կարգավիճակը: Այսպիսով, համաձայն օրենքի

<sup>56</sup> Վրաստանի Սահմանադրություն,

<[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/georgia/georgi-e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/georgia/georgi-e.htm)>

<sup>57</sup> «Ընդհանուր դատարանների մասին» Վրաստանի օրենքի հիման վրա ընդունված վարքագծի կանոններ, <<http://www.supremecourt.ge/eng/judges-self-governance/judges-ethics-code/>>

<sup>58</sup> Ալբանիայի Սահմանադրություն,

<[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/albania/albani-e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/albania/albani-e.htm)>

<sup>59</sup> «Դատական իշխանության կազմակերպման մասին» Ալբանիայի օրենք, <<https://www.osce.org/albania/41891?download=true>>

- 3-րդ հոդվածի՝ դատավորն անկախ է և ենթարկվում է միայն օրենքին.
- 26-րդ հոդվածի՝ դատավորն անձեռնմխելի է.
- 27-րդ հոդվածի՝ դատավորն անփոփոխելի է.
- 29-րդ հոդվածի՝ քաղաքական չեզոք պետք է լինի՝ դատավորին արգելելով անդամակցել որևէ կուսակցության կամ զբաղվել քաղաքական բնույթ ունեցող գործունեությամբ/
- 30-րդ (Ա) հոդվածի՝ դատավորը կարող է քաղաքացիական ծառայություն անցնել Արդարադատության նախարարության իրավաբանական-մասնագիտական ստորաբաժանումներում: Նման փորձառությունը դատավորին տալիս է առավելություն՝ իր դիմումի համաձայն պաշտոնավարել երկրորդ անգամ՝ առանց մրցույթին մասնակցելու.
- 32-րդ հոդվածի՝ դատավորը պարտավոր է պահպանել գաղտնիության կանոնները.
- 34-րդ հոդվածը հռչակում է դատավորի արժանապատվությունը՝ որպես իրավական կարգավիճակի տարր:

Օրենքի 23-րդ հոդվածում առկա է դատավորի երդման տեքստը, որի համաձայն դատավորը պարտավորվում է հետևել մասնագիտական վարքագծի կանոններին: Դրանք սահմանված են «Դատական վարքագծի կանոնագրքում»:<sup>60</sup> Այն առանձնացնում է դատավորի իրավական կարգավիճակի այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝

- անկախություն.
- անկողմնակալությունը.
- հոգատարություն.
- համարձակություն.
- պատշաճություն.
- դատական գործերի արդյունավետ և արդար քննում ու լուծում.
- հրապարակային ելույթների սահմանափակում.
- իր գործընկերների՝ վարքագծային կանոնների խախտում նկատելու դեպքում դրա բարձրաձայնում, ինչպես գործընկերոջը, այնպես էլ՝ պատկան մարմնին.
- արտադատական, արտապաշտոնեական գործունեության պատշաճություն:

---

<sup>60</sup> Ալբանիայի՝ «Դատական վարքագծի կանոնագիրք», <[https://euralius.eu/old/images/By-Laws/Code\\_of\\_Judicial\\_Ethics\\_Final\\_judges.pdf](https://euralius.eu/old/images/By-Laws/Code_of_Judicial_Ethics_Final_judges.pdf)>

#### 14. Բոսնիա և Հերցեգովինա

Բոսնիա և Հերցեգովինայի Սահմանադրությունը<sup>61</sup> համարվում է Դեյոթյան համաձայնագրի թիվ 4 հավելվածը, որը ստորագրվել է 1995 թվականի դեկտեմբերի 14-ին, Փարիզում: Այն չի անդրադառնում դատավորի իրավական կարգավիճակին:

Սահմանադրությունը թվում է մի շարք միջազգային փաստաթղթեր, որոնք գտնվում են սահմանադրաիրավական պաշտպանության տիրույթում: Դրանց շարքում նույնպես բացակայում են դատավորի իրավական կարգավիճակին առնչվող փաստաթղթերը:

Գիտակցելով դատավորների և դատախազների դերի կարևորությունը Բոսնիա և Հերցեգովինայի դաշնության ժողովրդի կյանքում, գործելով ի պաշտպանություն ժողովրդավարության, բազմակարծության և իրավունքի գերակայության սկզբունքի, ձգտելով բարձրացնել դատավորների և դատախազների անկախությունը Բոսնիա և Հերցեգովինայի Դաշնությունում, ցանկանալով, որ Բոսնիա և Հերցեգովինայի Դաշնության դատավորներն ու դատախազները գործեն Եվրոպական և միջազգային այլ ընդունված չափանիշներին համապատասխան, ընդունելով և ներառելով ԵԽ անդամ պետությունների նախարարների կոմիտեի թիվ Ռ (94) 12 հանձնարարականը «Անկախության, արդյունավետության և դատավորների դերի մասին»՝ Բոսնիա և Հերցեգովինայի Բարձր ներկայացուցչության գրասենյակն ընդունել է «Դատավորի և դատախազի վարքագծի կանոնագիրքը»:<sup>62</sup>

Նշված փաստաթուղթը դատավորի իրավական կարգավիճակի տարրեր է համարում.

- անկախությունը.
- անկողմնակալությունը.
- արդարությունը.
- պատշաճությունը պաշտոնական գործունեությունում և դրանից դուրս.
- մասնագիտական պիտանելիությունը, մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական զարգացումը:

<sup>61</sup> Բոսնիա և Հերցեգովինայի Սահմանադրություն,

[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/bosnia/bosnia-e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/bosnia/bosnia-e.htm)

<sup>62</sup> Բոսնիա և Հերցեգովինայի «Դատավորի և դատախազի վարքագծի կանոնագիրք», [http://www.ohr.int/?ohr\\_archive=code-of-ethics-for-judges-and-prosecutors-in-the-federation-of-bosnia-and-herzegovina](http://www.ohr.int/?ohr_archive=code-of-ethics-for-judges-and-prosecutors-in-the-federation-of-bosnia-and-herzegovina)

## 15. Քենիա

Քենիայի Սահմանադրության<sup>63</sup> 10-րդ գլուխը նվիրված է դատական իշխանությանը: Դրա տարբեր հոդվածներում որպես դատավորի իրավական կարգավիճակի տարրեր նշվում են **անկախությունը, անկողմնակալությունը, օրենքով սահմանված վարձատրություն ստանալը:**

Դատավորները հանդիսանում են պետական պաշտոնատար անձինք, հետևաբար նրանց նկատմամբ կիրառելի է նաև Սահմանադրության՝ «Պետական պաշտոնյաներ» վերտառությամբ գլուխը, որը վարքագծի տարրերին ավելացնում է նաև **չեզոքությունը՝ օբյեկտիվությունը, հաշվետվողականությունը, ազնվությունը, կարգապահությունը, անձնական շահերով չառաջնորդվելը:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Քենիայում Սահմանադրությունը դատավորներին դիտարկում է որպես պետական պաշտոնատար անձ, ենթադրվում է, որ հաշվետվողականության պահանջի ներքո հասկացվում է գույքի և եկամուտների հայտարարագրումը, ինչը համաձայն միջազգային փորձի՝ կիրառելի է պաշտոնատար անձանց դեպքում:

Քենիայի «Դատական վարքագծի կանոնագիրքը» ամբողջությամբ հիմնված է ՄԱԿ-ի Բանգլորյան սկզբունքների վրա, որոնք արդեն ներկայացվել են սույն զեկույցում:

## 16. Ճապոնիա

Ճապոնիայի Սահմանադրության<sup>64</sup> 6-րդ գլուխը նվիրված է դատական իշխանությանը: 76-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով՝ Ճապոնիայում դատավորն **անկախ է, ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքին**, իսկ 78-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ **դատավորն անփոփոխելի է:**

Ճապոնիայում գործում է «Դատավորի և դատախազի կարգավիճակի մասին» օրենքը, որը դատավորի իրավական կարգավիճակի տարրերին ավելացնում է **անկողմնակալությունը, ազնվությունը, օրինապահությունը:** Դատավորի վարքագծի վերաբերյալ այլ պաշտոնական փաստաթղթեր առկա չեն:

<sup>63</sup> Քենիայի Սահմանադրություն, <<http://kenyalaw.org:8181/exist/kenyalex/actview.xql?actid=Const2010>>

<sup>64</sup> Ճապոնիայի Սահմանադրություն,

<[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/japan/japan--r.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/japan/japan--r.htm)>



## 2. Բարձրագույն դատական խորհրդի դերը դատարանների և դատավորների անկախության երաշխավորման համատեքստում

### 2.1. Բարձրագույն դատական խորհուրդների վերաբերյալ միջազգային փաստաթղթեր

Մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային մի շարք փաստաթղթեր ճանաչում են անկախ և անկողմնակալ դատական համակարգի իրավունքը՝ որպես արդար դատաքննության իրավունքի լայն երաշխիք: Այսօր լայն տարածում ունի այն տեսակետը, որ դատական անկախությունը վերաբերվում է նաև **դատարանների ինստիտուցիոնալ ինքնավարությանը**: Դատական համակարգի լիարժեքության, ամբողջականության ու անկախության տեսանկյունից կարևորվում են դրա **ինքնակարգավորումը և ինքնակառավարումը**: Սա, մասնավորապես, ներառում է դատարանների աշխատանքի կազմակերպումը և դատավորների մասնագիտական գործունեությունը:

Դատական համակարգի անկախությունը երաշխավորելու վերաբերյալ մտահոգությունները հանգեցրին Դատական խորհուրդների ստեղծմանը: Առաջին օրինակը հանդիպեց Ֆրանսիայում, այնուհետև այս պրակտիկան շարունակվեց հարավարևմտյան Եվրոպայում և տարածում գտավ ամբողջ աշխարհում:<sup>65</sup>

Ըստ դատական համակարգ-պետական մարմիններ փոխհարաբերությունների բնույթի՝ առանձնացվում է երկու մոդել: **Առաջին** դեպքում առկա է դատական իշխանություն, որն իր կառավարման, վարչական և բյուջետային խնդիրներով կախված է գործադիրից: **Երկրորդ** դեպքում առկա է դատական համակարգ, որն ինքնակառավարվում է, ընդհուպ՝ ֆինանսապես:<sup>66</sup>

Չնայած նրան, որ աշխարհում կան առաջին մոդելի կիրառման հաջողված փորձեր՝ ընդհանուր նախապատվությունը տրվում է երկրորդին: Սրա նպատակը գործադիրի՝ թեկուզ ամենափոքր միջամտության բացառումն է: Ցանկացած համակարգի՝ ներառյալ դատական համակարգի կառավարման հարցում բյուջեն ունի կարևորագույն

<sup>65</sup> «Համաշխարհային լավագույն փորձ. դատական խորհուրդներ» Վիոլեն Աուտմեն, Սանդրա Էլենա, <<https://www.csm.org.pt/wp-content/uploads/2017/12/authemaandelena2004judicialcouncilslessonslearnedeuropelatinamerica.pdf>>

<sup>66</sup> «Դատական անկախության և անկողմնակալության խթանման ուղեցույց», Ժողովրդավարության և կառավարման գրասենյակ, էջ 2, <[https://www.ifes.org/sites/default/files/judicial\\_independence.pdf](https://www.ifes.org/sites/default/files/judicial_independence.pdf)>

նշանակություն, ուստի, դատարանների վրա անհարկի և կամայական ազդեցությունը կանխելու նպատակով հարկ է բյուջետային հարցերում ևս ինքնակազմակերպվել:

Վենետիկի Հանձնաժողովը կարծում է, որ դատական խորհուրդ ստեղծելիս հարկ է հաղթահարել երկու խոչընդոտ՝ կորպորատիվիզմ եւ քաղաքականացում:<sup>67</sup> Ստացվում է, որ ունենք երկու խնդիր. մի կողմից՝ դատարանների անկախության եւ ինքնակառավարման ապահովում, մյուս կողմից՝ կորպորատիվիզմի վտանգ: Այս երկուսը միասին լուծելու միակ ճանապարհը այնպիսի դատական խորհրդի ստեղծումն է, որի անդամները հավասարակշռված համամասնությամբ են:<sup>68</sup> Սա նշանակում է, որ խորհրդի անդամ դատավորները չպետք է բացարձակ մեծամասնություն կազմեն, նրանց պետք է հակադրվի և հավասարակշռի քաղաքացիական հասարակության անդամների ներկայությունը:<sup>69</sup> Նույնիսկ մեկ անգամ Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ Դատական խորհրդի անդամների մեծամասնությունը պետք է լինի դատական համակարգից դուրս:<sup>70</sup>

Եվրոպայում գործող դատական խորհուրդների ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել երկու հիմնական մոդել՝ **հարավեվրոպական և հյուսիսեվրոպական:**

**Հարավեվրոպական մոդելում** դատական խորհուրդն ունի սահմանադրական կարգավիճակ և դատական համակարգի անկախության երաշխավորման հարցում ունի նշանակալից մասնակցություն. այն է՝ դատավորների նշանակում, դատավորների կարգապահական վարույթների իրականացում:<sup>71</sup>

**Հյուսիսեվրոպական մոդելում** մարմինը թեթևակշիռ լիազորությունների ունի դատարանների կառավարման հարցում, սակայն մեծ դեր ունի դատարանի ֆինանսական կառավարման մեջ, մասնավորապես՝ կապված դատարանների բյուջեների հաստատման, բաշխման, վերահսկման հետ:<sup>72</sup>

<sup>67</sup> «Դատական անկախության և անկողմնակալության խթանման ուղեցույց», Ժողովրդավարության և կառավարման գրասենյակ, Կետ 21, <[https://www.ifes.org/sites/default/files/judicial\\_independence.pdf](https://www.ifes.org/sites/default/files/judicial_independence.pdf)>

<sup>68</sup> Դատավորների նշանակման վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի զեկույց, կետ 27, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2007\)028-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2007)028-e)>

<sup>69</sup> Ռումինիայի Սահմանադրության նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը, կետ 66, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2002\)012-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2002)012-e)>

<sup>70</sup> Դատավորների և դատախազների բարձրագույն խորհրդի մասին Բոսնիա և Հերցեգովինայի օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը, կետ 30, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)008-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)008-e)>

<sup>71</sup> «ԵՄ անդամ երկրների դատական խորհուրդների և դատավորների անձեռնմխելիության համեմատական վերլուծություն», Եվրոպական միություն, էջ 4, <<http://www.pravojustice.eu/storage/app/uploads/public/5ae/f8b/adb/5aef8badb2c7b574848064.pdf>>

<sup>72</sup> Տե՛ս նույն տեղում:



Մարմնի մոդելի ընտրությունը պայմանավորված է պետության իրավական սովորույթներով, դատաիրավական համակարգի առանձնահատկություններով: Ստորև ներկայացվում է նաև հակիրճ իրավական ակնարկ՝ դատական խորհուրդների ստեղծման հարցերում առանցքային նշանակություն ունեցող 4 փաստաթղթերի վերաբերյալ:

*Դատական համակարգի անկախության հիմնարար սկզբունքներ. ՄԱԿ*

1985թ. ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը հաստատեց «Դատական համակարգի անկախության հիմնարար սկզբունքները»:<sup>73</sup> Փաստաթղթի 1-ին հոդվածը **սահմանում է**, որ դատական համակարգի անկախությունը երաշխավորվում է պետության կողմից: Սա պետք է ամրագրվի Սահմանադրությամբ և հարգվի իշխանության մյուս ճյուղերի, պետական համակարգի մյուս մարմինների կողմից: Նույն փաստաթղթի 4-րդ հոդվածն **արգելում է** դատավորի մասնագիտական գործունեությանը՝ արդարադատության իրականացմանը կամայական միջամտությունը: Այս հարցում պետությունը պիտի դրսևորի հետևողականություն, մասնավորապես՝ օրենսդրական մակարդակով սահմանի նման արարքի հակաիրավականությունը: 7-րդ հոդվածը պետության վրա է **սահմանում** պարտականությունը՝ դատական համակարգին ապահովելու՝ գործունեության համար անհրաժեշտ պայմաններով:

Փաստաթղթի 20-րդ հոդվածի համաձայն՝ դատավորի **կարգապահական վարույթը**, որը դատավորի կողմից թույլ տված որեւէ կարգապահական խախտման և դրա համար նախատեսվող պատժի կիրառման քննարկումն է, պետք է ենթարկվի **«անկախ քննության»**, ինչը ենթադրում է՝ մի գործընթաց, որը իրականացվում է այնպիսի մարմնի կողմից, որտեղ առկա չէ օրենսդրի և գործադրի ներկայացվածություն:

*Դատարանների անկախության, արդյունավետության և դատավորների դերի մասին ԵԽՆԿ*

«Դատական համակարգի անկախության հիմնարար սկզբունքները» հիմք ընդունելով և դրան հղում կատարելով, մշակվել է Եվրոպայի խորհրդի անդամ երկրների

<sup>73</sup> ՄԱԿ-ի «Դատական համակարգի անկախության հիմնարար սկզբունքները», 1985թ., <<https://www.un.org/ruleoflaw/blog/document/basic-principles-on-the-independence-of-the-judiciary/>>

Նախարարների կոմիտեի թիվ Ռ94 (12) հանձնարարականը, որը վերաբերում է դատարանների անկախության, արդյունավետության և դատավորների դերին:

Հանձնարարականի իմաստով՝ **դատավորն անկախ է**, ընդ որում, անկախությունը դատավորի և դատական համակարգի պարտականությունն է: Դատական համակարգի անկախությունը պետք է ամրագրվի թե՛ Սահմանադրությամբ, թե՛ օրենքներով: Հանձնարարականի 1-ին բաժնի 2-րդ մասի գ (c) կետով նշվում է, որ դատավորի ընտրության, պաշտոնավարման, մասնագիտական առաջխաղացման հարցերով իրավասու մարմինը պետք է Կառավարությունից անկախ լինի: Այդպիսի անկախությունը կարող է դրսևորվել ինքնուրույն կազմակերպմամբ՝ մարմնի անդամներն ընտրվեն դատավորների կողմից, և ինքնուրույն գործունեությամբ՝ մարմինն ինքը սահմանի իր վարելիք քաղաքականության ընթացիկ կանոնները:

Հանձնարարականի 5-րդ բաժնի 3-րդ կետը դատավորի **կարգապահական հարցերով պետական իրավասու մարմնի** դերում կրկին տեսնում է առավել բարձր կանգնած դատական մարմնին կամ խորհրդին, կամ առավել բարձ կարգավիճակ ունեցող վերահսկվող այլ մարմնի:

*Դատական խորհուրդը հասարակական ծառայությունում. ԵԴԽՄ*

Քննարկվող հարցից անմասն չի մնացել նաև Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդը: Նախորդիվ քննարկված հանձնարարականի ընդունումից երեք տարի առաջ, 2007թ. Խորհուրդը հրապարակել է ԹԻՎ 10 Կարծիքը:<sup>74</sup> Անկախության վերաբերյալ համընդհանուր գաղափարներում, բնականաբար, Կարծիքը կրկնում է նախորդիվ քննարկված և ավելի վաղ ընդունված փաստաթղթերին: Որոշ հարցերում էլ, հենց Կարծիքն է պրակտիկա ձևավորելու հիմք դարձել:

ԵԴԽՄ-ն գտնում է, որ դատական խորհրդում դատավորների ներկայացվածությունը պետք է կազմի նյութական մեծամասնություն, այսինքն 50+1: Սրա հիմքով հետագայում որդեգրվել է առնվազն կեսի սկզբունքը:

Կարծիքը նաև թվում է որոշում ընդունելու 6 տիրույթ, որոնք պետք է պատկանեն Խորհրդին: Դրանք են.

- *դատավորի ընտրություն.*

<sup>74</sup> Եվրոպայի Դատավորների Խորհրդատվական Խորհուրդ, «Դատական խորհուրդը հասարակական ծառայության մեջ», <<https://rm.coe.int/168074779b>>

- *դատավորի նշանակում.*
- *դատավորի առաջխաղացում.*
- *դատավորի վարքագծի կանոնների սահմանում.*
- *դատարանների բյուջեների քննարկմանը մասնակցություն.*
- *դատական համակարգի վերաբերյալ օրենսդրության մշակմանը մասնակցություն:*

Դատավորի անկախության արդյունավետության եւ պարտականությունների մասին.

ԵԽՆԿ

Քննարկվող հարցին առավել հանգամանորեն է անդրադառնում կրկին Եվրոպայի Խորհրդի անդամ երկրների նախարարների կոմիտեի մեկ այլ՝ թիվ (2010) 12 հանձնարարականը<sup>75</sup>՝ **դատավորի անկախության, արդյունավետության և պարտականությունների** մասին:

Հանձնարարականի 4-րդ կետը նշում է մի կարևոր սկզբունք, համաձայն որի անհատ **դատավորի անկախությունը պաշտպանվում է դատական համակարգային անկախության միջոցով**: Սրա հիմնարար նշանակությունը կայանում է նրանում, որ Եվրոպան հակված է ընդհանուրից հատուկ սկզբունքին: Այսինքն, ոչ թե պետք է ողջ ներուժը ներդնել անհատ անկախ դատավորներ ստանալու մեջ՝ հուսալով, որ այդպիսով ինքնաբերաբար կունենանք անկախ համակարգ, այլ պետք է ապահովել դատական համակարգի՝ այլ ճյուղերից ու մարմիններից անկախությունն ու ինքնավարությունը, այնուհետև՝ անցնել կազուալ շտկումների:

7-րդ կետը ընդգծում է **դատավորի անկախության սահմանադրական և օրենսդրական երաշխիքները**:

8-րդ կետով նոր գաղափար է առաջ քաշվում առ այն, որ դատավորը, **երկմտելով** իր անկախության նկատմամբ ոտնձգումների վերաբերյալ, պետք է հնարավորություն ունենա դիմելու անկախ դատական խորհրդի, կամ խորհուրդը պիտի լիազորություն ունենա դատավորի անկախությանը ոտնձգումների հարցերին միջամտելու և շտկելու: Ընդ որում, հանձնարարականի բացատրական հատվածում նշվում է, որ սահմանադրական կարգավիճակ ունեցող մարմնի դեպքում դատավորի անկախությանը ոտնձգելու արգելքի մասին հայտարարությունը բավական է: Մարմնի կարգավիճակն ինքնին ապահովում է

<sup>75</sup> ԵԽՆԿ թիվ (2010) 12 հանձնարարական. Դատավորների անկախությունը, արդյունավետությունը և պատասխանատվությունը, <<https://rm.coe.int/16807096c1>>

նրա հեղինակությունը: Ուստի հայտարարությունը հիմք է այլ պետական մարմինների համար՝ գործընթաց սկսելու և ոտնձգողներին պատժելու համար:

Այսպիսով, հանձնարարականը նախատեսում է գործադիրից անկախ, պատշաճ կարգավիճակ և հեղինակություն ունեցող մարմնի ստեղծումը: Հանձնարարականի իմաստով<sup>76</sup> այդպիսին է սահմանադրական կամ օրենսդրական կարգավիճակ ունեցող, առնվազն անդամների կեսը դատավորներից կազմված և դատական համակարգի անկախության պահպանման առաքելություն ունեցող մարմինը: Հանձնարարականը չի անդրադառնում մարմնի անդամների մյուս կեսին, անդամների նշանակման կարգին:

Հիշյալն առավել հստակեցվում է հանձնարարականի 9-րդ հոդվածով, համաձայն որի դատավորին որևէ դատական գործից հեռացնելը կարող է իրականացվել միայն դատական համակարգի մաս կազմող մարմնի կողմից:

19-րդ և 20-րդ հոդվածներով կարևորվում է դատական խորհրդի դերը՝ ոչ միայն որպես հասարակություն-դատարաններ, այլև պետական մարմիններ-դատարաններ հարաբերությունների կամուրջ: Խրախուսվում է դատական խորհրդի կողմից նաև տեղեկությունների փոխանցման, թափանցիկության ապահովման գործառույթի իրականացումը՝ իհարկե պահպանելով օրենքով սահմանված գաղտնիությունն ու դատավորի իրավական կարգավիճակը:

Հանձնարարականի 4-րդ բաժինն ամբողջությամբ նվիրված է դատական խորհուրդներին: 26-րդ սահմանում է դատական խորհուրդների գործունեության ուղղությունները, որոնք հանգում են հետևյալին.

- դատավորի անկախության երաշխավորում.
- դատական համակարգի անկախության երաշխավորում.
- դատական համակարգի արդյունավետ գործունեության խթանում:

27-րդ հոդվածը խոսում է դատական խորհրդի կազմի մասին՝ նշելով, որ վերջինիս անդամների առնվազն կեսը պետք է դատավորներ լինեն՝ տարբեր աստիճաններից, նրանք պետք է ընտրվեն այն սկզբունքով, որպեսզի դատական խորհրդի ներսում **բազմակարծություն ապահովվի**: Հատկապես նշվում է, որ այն պետություններում, որտեղ դատախազն ունի նույն իրավական կարգավիճակը ինչ դատավորը, անդամները կարող են լինել նաև դատախազներ:

---

<sup>76</sup> ԵՄԸԿ թիվ (2010) 12 հանձնարարական. Դատավորների անկախությունը, արդյունավետությունը և պատասխանատվությունը, հոդվածներ 26-29, <<https://rm.coe.int/16807096c1>>

32-րդ հոդվածն ամբողջացնում է դատական խորհրդի նպատակը. որպես դատական համակարգի կազմակերպման եւ գործունեության պատասխանատու՝ խորհուրդը պետք է ապահովի դատարանների գործունեության արդյունավետություն՝ պաշտպանելով նրանց **անկախությունն ու անկողմնակալությունը**: Իսկ 40-րդ հոդվածը նախատեսում է խորհրդի ներգրավվածությունը նաև **բյուջետային հարցերում**:

50-րդ հոդվածը խոսում է **դատավորի անփոփոխելիության մասին**, նշելով, որ անփոփոխելիությունից բացառություններ կատարելիս որոշում ընդունող մարմինը՝ 46-րդ հոդվածով նախատեսված մարմինն է:

58-րդ հոդվածը խոսում է դատավորների **վերապատրաստումների, առաջնադասման մասին**՝ կազմակերպչի դերում տեսնելով նույն քննարկվող խորհրդին:

Եվ վերջում, 69-րդ հոդվածը կարգավորում է դատավորի **կարգապահական վարույթի** հետ կապված հարցերը և ազդարարում, որ անկախ ու արդար քննության համար անհրաժեշտ է արդեն իսկ նշված բնորոշումներով մարմնի առկայություն:

*ԵՆ Վենետիկի հանձնաժողովի իրավական դիրքորոշումները*

Վենետիկի հանձնաժողովը բազմիցս անդրադարձել է դատական խորհուրդների ստեղծմանը՝ տարբեր պետությունների օրենսդրական ակտերին գնահատական տալու շրջանակներում:<sup>77</sup> Զեկույցի սույն հատվածում հնարավորինս համապարփակ ներկայացվում է Հանձնաժողովի իրավական դիրքորոշումները:<sup>78</sup>

Այսպես, կողմ լինելով դատական ինքնակառավարման ընդհանուր գաղափարին, այնուամենայնիվ Հանձնաժողովի կարծիքով դատական համակարգի վարչական կառավարումը չպետք է ամբողջությամբ կենտրոնանա դատավորների ձեռքում: Այս

<sup>77</sup> Ալբանիայի Հանրապետության սահմանադրության հիմնական դրույթների փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-INF\(1998\)009-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-INF(1998)009-e)>;

Դատավորների և դատախազների բարձրագույն խորհրդի մասին Բոսնիա և Հերցեգովինայի օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)008-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)008-e)>; Վրաստանի սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ ԺՇՄԻԳ-ի համատեղ կարծիքը, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2005\)003-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2005)003-e)>

<sup>78</sup> Դատական համակարգի անկախության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի զեկույցը, <<https://rm.coe.int/1680700a63>>; Եվրոպական Դատավորների Խորհրդատվական Խորհրդի դատական խորհուրդների մասին նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի մեկնաբանությունները, <[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2007\)032-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2007)032-e)>

մոտեցումը սակայն չի գնում դեպի այն մոդել, երբ վարչական կառավարման տեսանկյունից դատական իշխանությունը կախման մեջ էր ընկնում գործադիրից: Ընդհակառակը, Հանձնաժողովն առաջարկում է այս հարցը լուծել հենց Դատական Խորհրդի ներսում՝ մնացած ոչ դատավոր անդամների հաշվին: Մասնավորապես, մյուս կեսը կազմող անդամները պետք է լինեն այլ պետական մարմինների ներկայացուցիչներ, իրավաբան-գիտնականներ:

Դատական խորհուրդը հանդիսանում է դատարան-հասարակություն կամուրջ և դատարանի անկախության երաշխավոր: Եթե այս երկու հատկանիշները համեմատական վերլուծության ենթարկենք, ապա կտեսնենք, որ ըստ էության, Խորհուրդը դերակատարում է ունենում նաև հասարակության շրջանում դատարանի հեղինակության ձեռքբերման հարցում: Սրանից բխում է, որ Խորհրդի անդամների կեսի՝ ոչ դատավոր լինելը ուժեղացնում է դատական համակարգի վրա հասարակական հսկողության աստիճանը:

### Դատական խորհուրդների եվրոպական ցանց

2004թ.-ին պաշտոնապես հիմնադրվեց Դատական խորհուրդների եվրոպական ցանցը:<sup>79</sup> Այն, ինչպես անունն է հուշում, բաղկացած է եվրոպական երկրների Դատական խորհուրդների ներկայացուցիչներից: Այս մարմնի գործառույթներն առավել գործնական են, քան տեսական, սակայն երբեմն Ցանցը հանդես է գալիս Կարծիքներով:

Նկատի ունենալով, որ մինչ 2004թ. հիմնադրումն արդեն իսկ ոլորտը կարգավորվում էր բազում միջազգային փաստաթղթերով, մարմինը վճռորոշ դեր չունեցավ համակարգի հիմնադրման հարցում: Հետևապես, զեկույցի սույն մասում դիտարկվում է Դատական խորհուրդների գործունեության ոլորտների ցանկը՝ ըստ Դատական խորհուրդների եվրոպական ցանցի:

Ըստ մարմնի 2010-2011թթ. զեկույցի<sup>80</sup> դրանք հետևյալն են.

- դատավորների նշանակում, առաջխաղացում.
- դատավորների վերապատրաստում.
- դատավորների կարգապահություն.
- դատարանների ֆինանսական հարցերի կառավարում.

<sup>79</sup> Դատական խորհուրդների եվրոպական ցանց, <<https://www.encj.eu/index.php/>>

<sup>80</sup> Դատական խորհուրդների եվրոպական ցանցի 2010-2011թթ. զեկույց, <[https://www.encj.eu/images/stories/pdf/workinggroups/report\\_project\\_team\\_councils\\_for\\_the\\_judiciary\\_2010\\_2011.pdf](https://www.encj.eu/images/stories/pdf/workinggroups/report_project_team_councils_for_the_judiciary_2010_2011.pdf)>

- դատավորի, դատական համակարգի վերաբերյալ բողոքների քննարկում.
- արդարադատության բարձր կերպարի պահպանում և խթանում.
- դատական համակարգի վերաբերյալ օրենսդրության մշակմանը մասնակցություն:

### **Միջազգային փաստաթղթերի ամփոփում**

Վերը նշված և չնշված միջազգային փաստաթղթերում արտացոլված սկզբունքների և գաղափարների վերլուծությունը բերում է որոշակի եզրահանգումների:

Այսպիսով, Դատական խորհուրդն անկախ մարմին է, որի հիմնական **առաքելությունը դատավորի և դատարանների անկախությունը երաշխավորելն է:** Դատական խորհուրդի գործունեության հիմքում **թափանցիկությունն ու հաշվետվողականությունն են:**

Կարևոր է նաև, որ Դատական խորհուրդն ունենա անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ներուժ: Խորհուրդը պետք է ունենա դատավոր և ոչ դատավոր անդամներ՝ ունենալ բարձր հասարակական վերահսկողության մեխանիզմներ:

## **2.2. Դատական խորհուրդների վերաբերյալ միջազգային փորձը**

Զեկույցի այս մասում կքննարկվի նախադեպային և ռոմանոգերմանական իրավական համակարգ ունեցող 16 երկրների փորձը՝ դատական խորհուրդների վերաբերյալ:

### **1. Ամերիկայի Միացյալ Նահանգներ**

ԱՄՆ-ում դատական համակարգը **եռաստիճան է:** Երրորդ՝ բարձրագույն աստիճանը **Գերագույն դատարանն է,** որը քննում է նաև **սահմանադրաիրավական վեճերը:** ԱՄՆ-ի փորձին ծանոթանալու համար, կարևոր է ուսումնասիրել Գերագույն դատարանին եւ մի քանի անկախ մարմինների՝ Դաշնային դատական կենտրոնի, Դատարանների վարչական գրասենյակի գործառույթները:<sup>81</sup>

**Դաշնային դատական կենտրոնը** Միացյալ Նահանգների կառավարության իրավական թևի կրթական, հետազոտական ինստիտուտն է:

---

<sup>81</sup> Դատական անկախությունը Միացյալ Նահանգներում. ներկա վիճակը և համապատասխան պատմական ակնարկ, <<https://www.fjc.gov/sites/default/files/2012/JudIndep.pdf>>

Դատական մարմիններն իրենց գործունեության համար անհրաժեշտ **բյուջեի** հարցով դիմում են ուղիղ օրենսդրին կամ գործադրին: Սա, իշխանության այդ երկու ճյուղերին հնարավորություն է տալիս ազդեցություն ունենալու դատարանների վրա:

Դատավորների նշանակման հարցում **թեկնածությունների ներկայացման մարմինների գործառույթը ունի խիստ խորհրդատվական կարգավիճակ:** Սահմանադրության համաձայն՝ Նախագահը՝ Մենատի առաջարկով կամ համաձայնությամբ նշանակում է դատավորներին, Գերագույն դատարանի անդամներին:

- 1) **ԱՄՆ դատարանների վարչական գրասենյակ.** այն աջակցում է դաշնային դատարաններին օրենսդրական, իրավական, տեխնիկական, կառավարման, վարչական, ֆինանսական հարցերում: Այս մարմինն է կազմում դատական տարեկան բյուջեն, որը պիտի հաստատվի Կոնգրեսի և Նախագահի կողմից: Գրասենյակի լիազորությունն է նաև Դատական ժողովի սպասարկումը, մասնավորապես, անձնակազմի և Ժողովի կոմիտեներին աջակցում:
- 2) **ԱՄՆ Դաշնային դատական կենտրոն.** մարմինը կազմակերպում է դատավորների և դատարանների այլ աշխատակիցների կրթական, հետազոտական թեմաներին հասանելիությունը: Այն նաև Դատական ժողովին խորհուրդներ է տալիս կապված դաշնային դատարանների վարչական կառավարման հետ: Կենտրոնի կառավարման մարմնի անդամ են Գերագույն դատարանի նախագահը, ԱՄՆ դատարանների վարչական գրասենյակի ղեկավարը, և Դատական ժողովի կողմից ընտրված 7 դատավորներ:
- 3) **Բազմընդատյա գործերի դատական հանձնաժողով.** այս մարմինն իրավասու է որոշում ընդունել գործը քննող դատարանի մասին, երբ մեկից ավելի դատարաններում քննվում են միևնույն իրավական պահանջով հարցեր:

Ինչպես պարզ դարձավ ԱՄՆ-ն դատական խորհուրդը չունի, սակայն սա չի նշանակում, որ այստեղ դատավորների անկախությունը չի երաշխավորվում:<sup>82</sup>

Երբ քննարկում ենք դատավորի և դատարանի **անկախության** ապահովումը, պետք է պարզել որոշումներ կայացնելու գործընթացը ինչքանով է **անկախ և զերծ որևէ ազդեցությունից՝ սահմանադրական մակարդակում:** Ըստ այդմ՝ ԱՄՆ Սահմանադրության<sup>83</sup> 3-րդ հոդվածը նվիրված է դատական իշխանությանը, որի համաձայն՝ դատարանների՝ ներառյալ Գերագույն դատարանի դատավորներն իրականացնում են իրենց

<sup>82</sup> Միացյալ նահանգների դատական համակարգը, <<https://www.uscourts.gov/about-federal-courts/judicial-administration>>

<sup>83</sup> ԱՄՆ Սահմանադրություն, <<https://constitutionus.com/>>



լիազորությունները բարեվարքության կանոնների շրջանակներում, և մատուցած ծառայությունների համար սահմանված ժամկետում ստանում են վարձատրություն, որն իրենց պաշտոնավարման ընթացքում չի կարող կրճատվել: ԱՄՆ դատավորները պաշտոնավարում են մինչև 65, ԳԴ անդամները՝ 70 տարեկան, չնայած եղել են դեպքեր, երբ ԳԴ անդամի տարիքը գերազանցել է 70-ը:

Բացի այդ, ԱՄՆ Գերագույն դատարանն իր դատական հսկողության իրավասության շնորհիվ ապահովում է, որպեսզի կառավարման համակարգի յուրաքանչյուր ճյուղ գործի իր լիազորությունների շրջանակներում:<sup>84</sup> Սա, բնականաբար, ապահովում է, որպեսզի ոչ մեկ չմիջամտի դատավորների գործունեությանը: Հարկ է ֆիքսել, որ Գերագույն դատարանի որոշումներն ԱՄՆ-ում ունեն մեծ ազդեցություն<sup>85</sup> և դատական համակարգի անկախության վերջնական ու ամբողջական ապահովումն իրականացնում է հենց Գերագույն դատարանը:

## 2. Կանադա

Կանադայում կա քառաստիճան դատական համակարգ՝ պայմանավորված դաշնային կառուցվածքով: Բարձրագույն աստիճանը Գերագույն դատարանն է, որը կատարում է նաև Սահմանադրական դատարանի ֆունկցիաներ: Դատական համակարգի **անկախության** առնչվող մարմինները Կանադայում Դաշնային դատական հարցերի կոմիտեն և Դատական խորհուրդն են: Կանադայի փորձն ուսումնասիրելու համար, հատկապես կարևոր է վերլուծել հիմնվելով Սահմանադրությունն<sup>86</sup> ու Դատավորների ակտը:<sup>87</sup>

Դատավորները նշանակվում են դաշնային Կառավարության կողմից: Այստեղ Կառավարությանն օգնում է Դաշնային դատական հարցերի Կոմիտեն,<sup>88</sup> որը կառավարում է տեղական համայնքները ներկայացնող խորհրդատվական կոմիտեներին: Կոմիտեն ստեղծվել է Խորհրդարանի ակտով, հիմնական նպատակը դատավորների **անկախությունը պաշտպանելն է**, որը դրսևորվում է դատավորների նշանակման հարցերում Կառավարությանն աջակցելով:

<sup>84</sup> Միացյալ Նահանգների դատական համակարգը, <<https://www.uscourts.gov/about-federal-courts/judicial-administration>>

<sup>85</sup> Միացյալ Նահանգների դատական համակարգը, <<https://www.uscourts.gov/about-federal-courts/educational-resources/about-educational-outreach/activity-resources/about>>

<sup>86</sup> Կանադայի Սահմանադրություն, <<https://laws-lois.justice.gc.ca/eng/const/>>

<sup>87</sup> Կանադայի Դատավորների ակտ, <<https://laws.justice.gc.ca/eng/acts/I-1/>>

<sup>88</sup> Դաշնային դատական հարցերի կոմիտեի պաշտոնական կայք, <<https://www.fja.gc.ca/home-accueil/index-eng.html>>

Դատավորներն իրենց կարիերայի ընթացքում շարունակաբար բարելավում են մասնագիտական գիտելիքները, **վերապատրաստվում են**: Ազգային դատական ինստիտուտն<sup>89</sup> ապահովում է **համապատասխան ծրագրերը** Կանադայի բոլոր դատավորների համար: Այն **ֆինանսավորվում է** բոլոր կառավարություններից:

Դաշնային դատավորների **վարքագծի կանոնները** սահմանում է Կանադական դատական խորհուրդը:<sup>90</sup> Շրջաններում նույնպես գործում են խորհուրդներ, ովքեր սահմանում են վարքագծի կանոններ՝ ըստ շրջանների: Դատական խորհուրդը ստեղծվել է Խորհրդարանի կողմից, նրա հիմնական գործառույթը դատական համակարգում ծառայությունների **որակի բարձրացումն է**: Ըստ պաշտոնական կայքում տեղ գտած տեղեկությունների Խորհուրդն ապահովում է **հանրություն-դատարաններ կապը**, աջակցում է դատավորների **մասնագիտական զարգացմանը**: Նշվում է, որ այս գործիքներով է Խորհուրդն ապահովում դատական համակարգի **անկախությունը**:

Դատավորի պաշտոնեական լիազորությունները **դադարեցնում է** Արդարադատության նախարարությունը:

Ըստ էության, այս երեք մարմիններն էլ՝ յուրաքանչյուրն իր լիազորությունների շրջանակնում, **երաշխավորում են դատական համակարգի անկախությունը**:

### 3. Ուկրաինա

Ուկրաինայում գործում է ավանդական եռաստիճան դատական համակարգ՝ առաջին, վերաքննիչ և վճռաբեկ աստիճաններով: Սրանից զատ գործում է և երկրի բարձրագույն դատական ատյանն է համարվում Գերագույն դատարանը, իսկ սահմանադրականության հարցերով զբաղվում է Սահմանադրական դատարանը:

Ուկրաինայում դատական **անկախության երաշխավորը Արդարադատության բարձրագույն խորհուրդն է**:

Ուկրաինայի փորձն ուսումնասիրելու համար հարկ է ուսումնասիրել Սահմանադրությունը,<sup>91</sup> «Դատական համակարգի և դատավորի իրավական

<sup>89</sup> Կանադայի Ազգային դատական ինստիտուտ, <<https://www.nji-inm.ca/index.cfm?langSwitch=en>>

<sup>90</sup> Կանադական դատական խորհուրդ, <[https://cjc-ccm.ca/en/resources-center/know-your-judicial-system/alternative-going-court?selMenu=resource\\_alternatives\\_en.asp](https://cjc-ccm.ca/en/resources-center/know-your-judicial-system/alternative-going-court?selMenu=resource_alternatives_en.asp)>

<sup>91</sup> Ուկրաինայի Սահմանադրություն,

<[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/ukraine/ukrain-e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/ukraine/ukrain-e.htm)>

կարգավիճակի մասին» օրենքը,<sup>92</sup> «Արդարադատության բարձրագույն խորհրդի մասին» օրենքը,<sup>93</sup> որոնք համալիր վերլուծության արդյունքում արված եզրահանգումները ներկայացված են ստորև:

Սահմանադրության 131-րդ հոդվածի համաձայն՝ ԱԲԽ-ն սահմանադրական մարմին է: ԱԲԽ-ի մասին օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ **Արդարադատության Բարձրագույն Խորհուրդը դատական իշխանության անկախության երաշխավորն է:**

ԱԲԽ-ն.

- ներկայացնում է նշանակման ենթակա դատավորներին.
- որոշում է կայացնում դատավորի կամ դատախազի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման մասին.
- իրականացնում է դատավորների կարգապահական վարույթները.
- համաձայնություն է տալիս դատավորին կալանավորելու կամ ձերբակալելու մասին.
- օրենքով սահմանված դեպքերում և կարգով դադարեցնում է դատավորի լիազորությունները.
- որոշում է ընդունում դատավորին մեկ այլ դատարան փոխադրելու վերաբերյալ.
- համաձայնություն է տալիս դատարաններում դատավորների թվի վերաբերյալ.
- եզրակացություն է տալիս որևէ կերպ դատավորին կամ դատարանին, դատական իշխանությանն առնչվող օրենսդրական ակտերի վերաբերյալ, որը ենթակա է պարտադիր քննարկման.
- ինքնուրույն կառավարում է իր բյուջեն.
- հաստատում է դատարանների, բացառությամբ՝ Գերագույն դատարանի, բյուջեների և ֆինանսական հարցերի վերաբերյալ փաստաթղթերը, սակայն դատարանների ֆինանսական կառավարումն իրականացվում է Պետական դատական ադմինիստրացիայի կողմից.
- նշանակում և պաշտոնից ազատում է Պետական դատական ադմինիստրացիայի ղեկավարին.

---

<sup>92</sup> «Դատական համակարգի և դատավորի իրավական կարգավիճակի մասին» Ուկրաինայի օրենք, <[https://www.legislationline.org/download/id/7029/file/Ukraine\\_law\\_judiciary\\_status\\_of\\_judges\\_2016\\_en.pdf](https://www.legislationline.org/download/id/7029/file/Ukraine_law_judiciary_status_of_judges_2016_en.pdf)>

<sup>93</sup> «Արդարադատության բարձրագույն խորհրդի մասին» Ուկրաինայի օրենք, <[https://www.legislationline.org/download/id/7030/file/Ukraine\\_Law\\_on\\_high\\_council\\_of\\_justice\\_2017\\_en.pdf](https://www.legislationline.org/download/id/7030/file/Ukraine_Law_on_high_council_of_justice_2017_en.pdf)>

- այլ միջոցներ է ձեռք առնում դատավորի և դատարանի անկախության ապահովման համար:

Ուկրաինայի ԱԲԽ-ի կազմի մեջ մտնում են.

- 10 դատավորներ՝ ներառյալ կենսաթոշակի անցածներ, ընտրվում են Դատավորների կոնգրեսի կողմից.
- 2 անդամ՝ ընտրված Խորհրդարանի կողմից.
- 2 անդամ՝ նշանակված Հանրապետության նախագահի կողմից.
- 2 անդամ՝ ընտրված փաստաբանական համայնքի կողմից.
- 2 անդամ՝ ընտրված Դատախազների ազգային կոնֆերանսի կողմից.
- 2 անդամ՝ ընտրված իրավաբանական բարձրագույն կրթության և հետազոտությունների ինստիտուտների ներկայացուցիչների կոնգրեսի կողմից:

#### 4. Էստոնիա

Էստոնիան ունի եռաստիճան դատական համակարգ: Էստոնիայի դատական համակարգի տարբերությունը նախորդիվ քննարկված երկրների դատական համակարգերից կայանում է նրանում, որ Էստոնական դատարանների երրորդ աստիճանը Գերագույն դատարանն է, որը միաժամանակ կատարում է **վճռաբեկության և սահմանադրական վեճեր քննելու ֆունկցիա:**

Էստոնիայում քննարկվող ոլորտում գործում են Դատավորների ասոցիացիան և Գերագույն դատարանը:

Էստոնիայի Սահմանադրության<sup>94</sup> 146-րդ հոդվածը խոսում է դատական համակարգի **անկախության** մասին: Դատավորների էստոնական ասոցիացիայի կողմից 2006թ.-ին ընդունված փաստաթղթի<sup>95</sup> 5-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ **Ասոցիացիայի նպատակը դատարանների և դատավորների անկախությունը պաշտպանելն է:** Սակայն հարկ է նշել, որ այս ոլորտում Ասոցիացիան օժտված չէ ծանրակշիռ լիազորություններով, ինչը թերևս հասկանալի է, քանզի այն ոչ պետական, սահմանադրական կամ օրենսդրական կարգավիճակ չունեցող մարմին է: Այն, ըստ իրավական կարգավիճակի, մասնավոր իրավունքի իրավաբանական անձ է:

<sup>94</sup> Էստոնիայի Սահմանադրություն,  
<[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/estonia/estoni-e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/estonia/estoni-e.htm)>

<sup>95</sup> Էստոնիայի դատավորների ասոցիացիայի կանոնակարգ, <[https://www.ekou.ee/doc/EKoY-articles\\_2014-11-28.pdf](https://www.ekou.ee/doc/EKoY-articles_2014-11-28.pdf)>

Նախորդ երկրների փորձն ուսումնասիրելիս քննարկում էինք դատական խորհուրդների լիազորությունները դատավորների պաշտոնավարման տարբեր ոլորտներում: Այստեղ, **անկախության երաշխավորը դերակատարում ունի միայն դատավորների վարքագծի կանոնների սահմանման հարցում:**

Պարզելու համար, թե որոնք են կարգապահության, նշանակման, կառավարման հարցերով իրավասու մարմինները, հարկ է ուսումնասիրել Էստոնիայի Դատարանների մասին ակտը:<sup>96</sup>

Այսպիսով, դատավորների **նշանակումն** իրականացնում են հետևյալ մարմինները.

- առաջին և վերաքննիչ ատյանների դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Գերագույն դատարանի առաջարկությամբ.
- երրորդ ատյանի՝ Գերագույն դատարանի դատավորները նշանակվում են Խորհրդարանի կողմից՝ Գերագույն դատարանի նախագահի առաջարկությամբ.
- Գերագույն դատարանի նախագահին ընտրում է Խորհրդարանը՝ Հանրապետության նախագահի առաջարկությամբ:

Ինչ վերաբերվում է դատավորների **կարգապահական վարույթներին**, ապա դրանք իրականացնում և պատիժներ է կիրառում, դատավորների լիազորությունները դադարեցնում է Գերագույն դատարանի Կարգապահական պալատը: Պալատի որոշումները **բողոքարկվում են** Գերագույն Դատարան:

Դատավորին **այլ դատարան փոխադրելու** լիազորությունը կիսում են Արդարադատության նախարարությունն ու Գերագույն դատարանը: Դատավորների **վերապատրաստումները** կազմակերպում և իրականացնում է դատավորների կողմից 5 տարի ժամկետով ընտրված վարչաշրջանի դատարանների նախագահը: Դատարանների վարչական **կառավարումը** և **բյուջետային** խնդիրներն իրականացնում է Դատարանների կառավարման խորհուրդը: Այն կազմված է.

- Գերագույն դատարանի նախագահից՝ ի պաշտոնե.
- 5 դատավորներից՝ ընտրված դատավորների կողմից.
- 2 Խորհրդարանի անդամներից.
- 1 փաստաբանից՝ ընտրված Փաստաբանների ասոցիացիայի կողմից.
- Գլխավոր դատախազից կամ նրա առաջարկած 1 դատախազից.
- Արդարադատության կանցլեր/խորհրդականից կամ նրա առաջարկած 1 անձից.
- Արդարադատության նախարարից կամ նրա առաջարկած 1 անձից:

<sup>96</sup> Էստոնիայի՝ Դատարանների Ակտ - <https://bit.ly/2W9RqIB>

Ամփոփելով Էստոնիայի փորձը, հանգում ենք նրան, որ այստեղ չկա 1 մարմին, որն իրականացնում է դատական խորհրդի գործառույթներ: Անկախության երաշխավորումը իրականացվում է մի քանի մարմինների համալիր գործունեության արդյունքում, սակայն, ինչպես հասկանալի է վերը ներկայացվածից, դատարանների և դատավորների անկախության ապահովման տարբեր ոլորտներում ամենաշատ ներկայացվածությունն ունի Էստոնիայի Գերագույն դատարանը:

## 5. Լիտվա

Լիտվայի դատական համակարգը նույնպես եռաստիճան է: Այստեղ, ինչպես Լատվիայում, երրորդ աստիճանը կրում է Գերագույն դատարան անվանումը: Լիտվայում նույնպես սահմանադրական գործերը քննում է Սահմանադրական դատարանը:

Լիտվայում ստեղծվել է Դատական խորհուրդ, սակայն դատական անկախության ապահովման լիազորությունները բաշխված են նաև այլ մարմինների մեջ՝ Ազգային դատարանների ադմինիստրացիա, Դատական վարքագծի և կարգապահության կոմիտե, Արդարադատության նախարարություն, Դատավորների դատարան:

Լիտվայի Սահմանադրության<sup>97</sup> 112-րդ հոդվածի համաձայն՝ Դատական խորհուրդը Հանրապետության նախագահին խորհուրդ է տալիս դատավորների նշանակման, առաջխաղացման, տեղափոխման և պաշտոնի դադարման հարցերում: **Դատական անկախության երաշխավորի դեր Խորհուրդը չունի:** Խորհրդի լիազորությունները սահմանվում են Լիտվայի՝ «Դատարանների մասին» օրենքով:<sup>98</sup>

Բացի Սահմանադրությամբ նշվածից, Խորհուրդը Հանրապետության Նախագահին առաջարկում է **դատարանների և դրանց ստորաբաժանումների նախագահների և փոխնախագահների թեկնածուներին**, ինչպես նաև խորհուրդ է տալիս դատարաններում **դատավորների քանակի սահմանման** մասին: Խորհրդի լիազորությունների մեջ է մտնում նաև դատավորների ընտրության **Քննող Հանձնաժողովի կազմումն ու գործունեության կանոնների հաստատումը:**

Ազգային դատարանների ադմինիստրացիան և Արդարադատության նախարարությունը կազմակերպում և իրականացնում են դատավորների **վերապատրաստման**

<sup>97</sup> Լիտվայի Սահմանադրություն,

<[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/litva/litold-e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/litva/litold-e.htm)>

<sup>98</sup> «Դատարանների մասին» Լիտվայի օրենք,

<[https://www.legislationline.org/download/id/6969/file/Lithuania\\_law\\_on\\_courts\\_1994\\_Am2008\\_en.pdf](https://www.legislationline.org/download/id/6969/file/Lithuania_law_on_courts_1994_Am2008_en.pdf)>

**դասընթացները:** Ազգային դատարանների ադմինիստրացիան, ըստ կարգավիճակի, պետական կառավարման մարմին է, որը կարող է ունենալ 51-200 աշխատող: Այստեղ Դատական խորհուրդն ունի **ուսումնական ծրագիրը, դասընթացի անցկացման կանոնները, դասախոսներին առաջադրված չափանիշները հաստատելու լիազորություն:** Այն կարող է նաև հանդես գալ ողջ գործընթացի վերաբերյալ **մեկնաբանություններով, եզրահանգումներով:**

Ինչ վերաբերվում է դատավորների **կարգապահական պատասխանատվությանը**, ապա վարույթն իրականացնող մարմինը Դատական վարքագծի և կարգապահության կոմիտեն և Դատավորների դատարանն են, իսկ Դատական խորհուրդը նշանակում է առաջին մարմնի 7 անդամներից 4-ին, մյուս 2-ը նշանակվում են Հանրապետության նախագահի, իսկ 1-ը՝ Խորհրդարանի կողմից: Դատական խորհուրդը նշանակում է նաև երկրորդ մարմնի բոլոր անդամներին: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով Խորհուրդը կարող է պաշտոնից հեռացնել նշանակված անդամներին:<sup>99</sup> Դատական խորհրդի այս պաշտոնի նշանակելու և ազատելու գործառույթը նրան մոտեցնում է դատավորների անկախության ապահովմանը:

Բացի այդ, Դատական խորհուրդն է հաստատում կարգապահական վարույթի **ընթացակարգը**, ինչպես նաև կարող է **նախաձեռնել** կոնկրետ դատավորի դեմ կարգապահական վարույթ:

Դատավորների **վարքագծի կանոնների** սահմանման հարցում Խորհուրդը դերակատարում չունի: Վարքագծի կանոններն ընդունվել են դատավորների ընդհանուր ժողովի շրջանակներում:

Խորհուրդը չունի օրենսդրական նախաձեռնության իրավունք, սակայն կարող է այդպիսով հանդես գալ Հանրապետության նախագահի կամ Կառավարության կամ Կառավարության անդամի առաջ:

Խորհրդի որոշումները **վերանայվում են** հենց խորհրդի կողմից, կամ **բողոքարկվում են** վարչական դատարան: Դատական համակարգի **ֆինանսական հարցերով** զբաղվում է Ազգային դատարանների ադմինիստրացիան: Հետաքրքրական է, Խորհրդի այլ լիազորությունների մեջ նշվում է **դատական համակարգի ինքնավարության օգտին հանդես գալը:**

Խորհրդի ունի հետևյալ կազմը.

---

<sup>99</sup> Լիտվայի դատական խորհրդի կառուցվածքը, հոդված 20.9, <<https://www.teismai.lt/en/self-governance-of-courts/judicial-council/about-council/660>>

- 20 դատավոր՝ բոլոր դատարանների ներկայացվածության սկզբունքով.
- 3 անձ՝ ի պաշտոնե, որոնք են.
  - o Գերագույն դատարանի նախագահը.
  - o Վերաքննիչ դատարանի նախագահը.
  - o Վարչական գերագույն դատարանի նախագահը:

## 6. Լատվիա

Լատվիան ունի առաջին աստիճանի, վերաքննիչ դատարաններ: Երրորդ աստիճանը Գերագույն դատարանն է, իսկ սահմանադրական ճյուղում գործում է Սահմանադրական դատարանը:

Լատվիայում գործում է Դատական խորհուրդ, որը հանդիսանում է Գերագույն դատարանի կառուցվածքային մասը, հետևաբար դատական **անկախության հետ կապված լիազորություններն իրականացվում են ի դեմս Գերագույն դատարանի:**

Լատվիայի Սահմանադրությունը<sup>100</sup> ոչ մի նշում չի պարունակում դատական խորհրդի մասին, ուստի մարմնի մասին կարգավորումները նախատեսված են Լատվիայի «Դատական իշխանության մասին» օրենքով:<sup>101</sup>

Նախապես նշենք, որ Դատական խորհուրդն աչքի չի ընկնում ծանրակշիռ լիազորություններով: **Խորհուրդը չի հանդիսանում դատական անկախության երաշխավոր:**

Դատավորների **նշանակման և առաջխաղացման հարցերում** Խորհուրդը միայն իրավասու է դատավորին տեղափոխել նույն աստիճանի այլ դատարան և հաստատել դատավորների գնահատման կանոնները: Դատավորների **վերապատրաստման հարցում** նույնպես Խորհուրդը լիազորություն չունի: Այն կազմակերպվում և իրականացվում է Դատական ադմինիստրացիայի կողմից:

Դատական **վարքագիծը** սահմանված է Դատական վարքագծի կոմիտեի կողմից, ուստի այստեղ նույնպես Խորհուրդը դերակատարում չունի:

**Օրենսդրական ակտերի վերաբերյալ կարծիք** հայտնելը կարգավորված է հետևյալ կերպ: Սահմանադրական դատարանի 01.11.2009թ.-ի որոշման համաձայն՝ օրենսդիրը

<sup>100</sup> Լատվիայի Սահմանադրություն,

<[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/latvia/latold-e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/latvia/latold-e.htm)>

<sup>101</sup> «Դատական իշխանության մասին» Լատվիայի օրենք, <<https://www.refworld.org/docid/4c3c45222.html>>



պարտավոր է Խորհրդից կարծիք հարցնել, լսել այն, հարգել, սակայն իրավունք ունի չհամաձայնել դրա հետ: Ստացվում է, որ Խորհրդի կարծիքը բացառապես խորհրդատվական բնույթի է:

Խորհրդի **որոշումները** վերանայման ենթակա չեն:

Խորհուրդը չունի առանձնացված **բյուջե**: Խորհրդի ֆինանսական կառավարումն իրականացնում է Գերագույն դատարանի ադմինիստրացիան:

Դատավորների **կարգապահական պատասխանատվության** հարցերում նույնպես Խորհուրդը մասնակցություն չունի: Այստեղ վարույթ իրականացնող մարմինը Դատական կարգապահական կոմիտեն և Կարգապահական դատարանն են:

Լատվիայի Դատական խորհուրդը կազմված է

- 7 դատավորներից.
- 8 անձանցից՝ ի պաշտոնե, նրանք են՝
  - o Գերագույն դատարանի նախագահը.
  - o Սահմանադրական դատարանի նախագահը.
  - o Արդարադատության նախարարը.
  - o Խորհրդարանի դատական կոմիտեի ղեկավարը.
  - o Գլխավոր դատախազը.
  - o Երդվյալ փաստաբանների լատվիական խորհրդի նախագահը.
  - o Երդվյալ նոտարների լատվիական խորհրդի նախագահը.
  - o Երդվյալ կարգադրիչների խորհրդի նախագահը:

Դատական խորհուրդն իր կարգավիճակով հանդիսանում է Գերագույն դատարանի կառուցվածքային մաս,<sup>102</sup> իսկ Խորհրդի բնականոն գործունեությունն ապահովվում է Գերագույն դատարանի ադմինիստրացիայի կողմից:<sup>103</sup>

2016թ. Լատվիայի Գերագույն դատարանը Եվրոպայի Խորհրդի ֆինանսավորմամբ իրականացնում է «Գերագույն դատարանը՝ որպես դատական համակարգի արդյունավետության երաշխավոր» ծրագիրը: Այս ծրագրի շրջանակներում քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք վերաբերվում են դատարանների աշխատանքի կազմակերպմանը, հանրության՝ դատարանների նկատմամբ վստահության

<sup>102</sup> Լատվիայի Գերագույն դատարանի կառուցվածքը, <<http://www.at.gov.lv/en/par-augstakotiesu/struktura>>

<sup>103</sup> «Դատական իշխանության մասին» Լատվիայի օրենք, <<https://www.refworld.org/docid/4c3c45222.html>>

բարձրացմանը: Այս տեսանկյունից վերլուծվում է նաև Դատական խորհրդի աշխատանքը<sup>104</sup>:

Այժմ, եթե համադրում ենք զեկույցում նկարագրված դատական խորհուրդների դերը, մոդելները և Լատվիայի դատական խորհրդի մասին վերը նշվածը, ապա հասկանալի է, որ այն ունի աջակցող, կցորդի դեր: Խորհուրդը ստեղծվել է ոչ թե ինքնուրույն լիազորություններ իրականացնելու միջոցով անկախ դատական համակարգ երաշխավորելու, այլ դատական համակարգի անկախության տարբեր ոլորտներում իրավասու մարմիններին աջակցելու համար, սակայն, առավելապես Գերագույն դատարանին:

Այս ենթադրությունը փաստվում է Լատվիայի Սահմանադրական դատարանի 01.10.2011թ.-ի որոշմամբ արտահայտված այն դիրքորոշմամբ, համաձայն որի՝ Դատական խորհրդի գործունեությունն ուղղված է ժողովրդավարության և դատական համակարգի ամրապնդմանը/ուժեղացմանը, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքի հնարավորինս ապահովմանը:<sup>105</sup> Այսինքն, ՄԴ-ն Խորհրդի դերը վերլուծում է որպես տարբեր բնագավառներում օժանդակողի, այլ ոչ թե՝ հստակ առաքելություն ունեցող մարմնի:

## 7. Գերմանիա

Գերմանիայում գործում են առաջին և վերաքննիչ աստիճանի դատարաններ, երրորդ աստիճանի գործառույթը չի իրականացվում մեկ դատարանի կողմից: Գործում են դաշնային դատարաններ, որոնք երկրի բարձրագույն դատական աստիճաններն են, դրանք են՝ քաղաքացիական/քրեական, վարչական, սոցիալական, ֆինանսական և աշխատանքային: Կարգավիճակով նշվածներին հավասար գործում է Դաշնային սահմանադրական դատարանը: Գերմանիայում **դատական խորհուրդ չկա**, ոլորտում գործում են Դատավորների ասոցիացիան, կարգապահական դատարանը, Արդարադատության նախարարությունը:

<sup>104</sup> «Գերագույն դատարանները որպես դատական համակարգերի արդյունավետության երաշխիք՝ Եվրոպական միությունում» ծրագիր, <<http://at.gov.lv/en/jaunumi/par-notikumiem/the-supreme-court-of-latvia-manages-an-international-project-funded-by-the-european-commission>>

<sup>105</sup> Լատվիայի սահմանադրական դատարան, <[http://www.satv.tiesa.gov.lv/en/cases/?case-filter-years=\[2011\]&case-filter-status=&case-filter-types=&case-filter-result=&searchtext=>](http://www.satv.tiesa.gov.lv/en/cases/?case-filter-years=[2011]&case-filter-status=&case-filter-types=&case-filter-result=&searchtext=>)>

Գերմանիայի փորձն ուսումնասիրելիս, հատկապես կարևոր է վերլուծել երեք իրավական ակտ. Սահմանադրություն,<sup>106</sup> Դատական փաստաթուղթ,<sup>107</sup> Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի հարցաշար:<sup>108</sup>

Սահմանադրության 97-րդ հոդվածի համաձայն՝ դատավորն **անկախ է** և ենթարկվում է միայն օրենքին: Քանի որ Գերմանիան հայտնի է իշխանությունների բաժանման դեպքում երեք ճյուղերի զսպումների և հակակշիռների համակարգի արդյունավետությամբ, դատական անկախությունը չի տուժում, երբ դրա կազմակերպմանը մասնակցում են օրենսդիրն ու գործադիրը:

Ինչպես արդեն նշվեց՝ Գերմանիայում **դատական խորհուրդ չկա**, իսկ դատավորների նշանակման հարցում մասնակցություն ունեն օրենսդիրն ու գործադիրը: Սակայն, այդ գործընթացում լիազորություն ունի նաև մի անկախ մարմին՝ Դատավորների ընտրության կոմիտեն: Այն դատավորների թեկնածուների գրավոր առաջարկ է ներկայացնում, որը, սակայն, պարտադիր չէ:

Դատարանների **վարչական կառավարումն** իրականացնում են դատարանների նախագահներն ու Արդարադատության նախարարը՝ միասին, առանց միջամտելու բուն արդարադատության իրականացման գործընթացին: Դատավորների **կարգապահական** հարցերը լուծելու համար երկրում գործում են Կարգապահական դատարաններ: **Վերապատրաստումներից** Գերմանիայում մեծ տարածում ունեն մասնագիտական կարիերային անմիջապես նախորդող նախապատրաստական դասընթացները: Որպես կանոն, յուրաքանչյուր դատարանի նախագահ կազմակերպում է նման դասընթաց իր դատարանում պաշտոնավարել պատրաստվողների համար: Սակայն, երբեմն ընդհանուր մասշտաբի վերապատրաստումներ կազմակերպում է նաև Դատավորների ասոցիացիան: Դատարանների **բյուջեները** հաստատում է Խորհրդարանը, իրականացնում՝ Կառավարությունը:

## 8. Ֆրանսիա

Ֆրանսիայում դատական համակարգը եռաստիճան է, սահմանադրականության հարցերը քննում է Սահմանադրական Խորհուրդը:

<sup>106</sup> Գերմանիայի Դաշնության Սահմանադրություն, <<https://www.btg-bestellservice.de/pdf/80201000.pdf>>

<sup>107</sup> Գերմանիայի Դատական Փաստաթուղթ, <[http://www.gesetze-im-internet.de/englisch\\_drig/](http://www.gesetze-im-internet.de/englisch_drig/)>

<sup>108</sup> Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2007 թվականի հարցաշարը՝ դատական խորհուրդների վերաբերյալ, <<https://rm.coe.int/090000168046be34>>

Ֆրանսիայի Սահմանադրության<sup>109</sup> 64-րդ հոդվածի համաձայն **Բարձրագույն Դատական Խորհուրդը ինքնավար մարմին է**, որն օժանդակում է Հանրապետության Նախագահին դատական համակարգի **անկախության երաշխավորման հարցում**:

**Դատավորների նշանակման հարցում** ԲԴԽ-ն Հանրապետության Նախագահին առաջարկում է Վճռաբեկ դատարանի նախագահի, պալատների նախագահների, դատավորների, Վերաքննիչ դատարանների և ընդհանուր իրավասության դատարանների նախագահների թեկնածուներին: Մնացյալ դատավորներին առաջարկում է Արդարադատության նախարարությունը, իսկ ԲԴԽ-ն տալիս է եզրակացություն, որը պարտադիր է նախարարության համար: Դատավորների **վերապատրաստման հարցում** ԲԴԽ-ն ոչ մի դեր չունի: Այս լիազորությունը վերապահված է օրենսդրական կարգավիճակ ունեցող Ազգային դատական դպրոցին:

Դատավորների **կարգապահական վարույթ** իրականացնող և սանկցիա կիրառող մարմինը ԲԴԽ-ն է: Այն քննարկում է ինչպես դատարանների նախագահների, այնպես էլ դատավորների եւ դատավարության մասնակիցները բերած դիմումները: Ինչ վերաբերվում է դատավորների **վարքագծի կանոնների** սահմանմանը, ապա ԲԴԽ-ն կարող է հրապարակել նմանաբովանդակ կանոնագրքեր: ԲԴԽ-ն օրենսդրական ակտերի վերաբերյալ **կարծիք է** հայտնում Հանրապետության նախագահի դիմելու դեպքում: ԲԴԽ-ի որոշումները կարող են **բողոքարկվել** Պետական խորհուրդ: Դատական համակարգի **բյուջեի** հարցով էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության հետ բանակցում և ֆինանսները կառավարում է Վճռաբեկ դատարանի նախագահը:

ԲԴԽ-ն կազմված է.

- 6 դատավորներից, որոնցից 5-ն ընտրվում են դատավորների կողմից, 1-ը՝ դատախազների.
- 6 դատախազներից, որոնցից 5-ն ընտրվում են դատախազների, 1-ը դատավորների կողմից.
- Վճռաբեկ դատարանի նախագահից.
- Գլխավոր դատախազից.
- 8 արդարադատության համակարգից դուրս անձանցից, որոնցից 1-ը Պետական խորհրդի անդամ է՝ ընտրված Պետական խորհրդի ընդհանուր ժողովի կողմից, 1-ն իրավաբան է նշանակված Փաստաբանների խորհրդի նախագահի կողմից, մնացած

<sup>109</sup> Ֆրանսիայի Սահմանադրություն,

<[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/france/france-e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/france/france-e.htm)>

6-ը՝ 2-ական նշանակվում են Հանրապետության, Սենատի և Ազգային Ժողովի նախագահների կողմից: Վերջին 6 անդամի համար իրավաբան լինելու պարտադիր պահանջ չկա:<sup>110</sup>

## 9. Լեհաստան

Լեհաստանի Սահմանադրության<sup>111</sup> 179-րդ հոդվածի համաձայն՝ դատավորներին նշանակում է **Հանրապետության նախագահը՝ Ազգային դատական խորհրդի** ներկայացմամբ:

186-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱԴԽ-ն պետք է ապահովի **դատարանների և դատավորի անկախությունը**: Իսկ 2-րդ մասը ԱԴԽ-ին իրավունք է տալիս դիմելու Սահմանադրական դատարան՝ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով, այնքանով, որքանով դա առնչվում է դատավորի կամ դատարանի անկախությանը:

187-րդ հոդվածը սահմանում է ԱԴԽ-ի հետևյալ կազմը.

- Գերագույն դատարանի առաջին նախագահը, Արդարադատության նախարարը, Գերագույն վարչական դատարանի նախագահը՝ ի պաշտոնե և Հանրապետության նախագահի կողմից նշանակված 1 անձ.
- Գերագույն, ընդհանուր, վարչական և ռազմական դատարաններից ընտրված 15 դատավոր.
- Սեյմի 2 անդամ և Սենատի 2 անդամ:

Անդամները պաշտոնավարում են 4 տարի ժամկետով, և իրենց կազմից ընտրում են ԱԴԽ նախագահ:

ԱԴԽ-ի լիազորությունները սահմանվում են 2011թ. ԱԴԽ-ի մասին Ակտով:<sup>112</sup> Դրա 3-րդ հոդվածի համաձայն ԱԴԽ-ի լիազորություններն են.

- բոլոր՝ ներառյալ Գերագույն դատարանների դատավորների գնահատում և ներկայացում Հանրապետության նախագահին.
- դատավորի վարքագծի կանոնների մշակում.

<sup>110</sup> Ֆրանսիայի Բարձրագույն դատական խորհրդի կառուցվածքը, <[https://www.encj.eu/images/stories/pdf/factsheets/csm\\_france.pdf](https://www.encj.eu/images/stories/pdf/factsheets/csm_france.pdf)>

<sup>111</sup> Լեհաստանի Սահմանադրություն, <<https://www.sejm.gov.pl/prawo/konst/angielski/kon1.htm>>

<sup>112</sup> Լեհաստանի՝ Ազգային Դատական Խորհրդի մասին Ակտ, <http://www.krs.pl/en/legal-acts.html>

- դատական համակարգի անկախության վերաբերյալ օրենսդրական նախագծերի վերաբերյալ կարծիքի հայտնում.
- դատավորների մասնագիտական կրթության և վերապատրաստումների ծրագրի, ժամանակահատվածի վերաբերյալ կարծիքի հայտնում:

## 10. Ավստրիա

Ավստրիան ունի առաջին և երկրորդ ատյանի դատարաններ, Գերագույն դատարան, որը երկրի երրորդ և բարձրագույն դատական ատյանն է, Սահմանադրական դատարան: Ավստրիայում դատական համակարգի հարցերի լուծումը մեծապես դրված է Արդարադատության նախարարության վրա, այստեղ անկախ մարմին չի գործում:

Ավստրիայի Սահմանադրության<sup>113</sup> 87-րդ հոդվածի համաձայն՝ դատավորն իր մասնագիտական պարտականությունները կատարելիս **անկախ է**: Ավստրիայի՝ դատական համակարգի **անկախության երաշխավորման** պրակտիկան խիստ տարբերվում է նախորդիվ քննարկված երկրներից: Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի՝ Ավստրիային ուղղված հարցաշարից եւ պատասխաններից<sup>114</sup> տեղեկանում ենք ներքոնշյալի մասին.

- 1) Ավստրիայում դատարանների վարչական կառավարումն իրականացնում են դատարանների դատավորները՝ Արդարադատության նախարարի հեղինակության ներքո: Այս գործառույթն իրականացնելիս դատարանների նախագահները պարտավոր են ենթարկվել Նախարարի և ավելի բարձր դիրք ունեցող դատարանների նախագահների ցուցումներին: Այս փուլում նրանք ընկալվում են որպես գործադիր իշխանության մաս: Սակայն, երբ նրանք անցնում են արդարադատության իրականացմանը, նրանք դատական իշխանության մաս են, և այստեղ արդեն չեն ենթարկվում այլոց ցուցումներին, ինչպես նշում է Սահմանադրությունը:
- 2) Որպես կանոն, դատավորին՝ իր գործունեության համար անհրաժեշտ պայմաններով ապահովելու, դատական պրոցեսների **անխափանությունն** ապահովելու պարտականությունը կրում է դատարանի նախագահը: Նախագահի

<sup>113</sup> Ավստրիայի Սահմանադրություն,

<[http://constitutionnet.org/sites/default/files/Austria%20 FULL %20Constitution.pdf](http://constitutionnet.org/sites/default/files/Austria%20FULL%20Constitution.pdf)>

<sup>114</sup> Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2007 թվականի հարցաշարը՝ դատական խորհուրդների վերաբերյալ, <<https://rm.coe.int/090000168046be34>>

այս լիազորությունն ընդգրկում է նաև **վերապատրաստումների** կազմակերպումը: Հարկ եղած դեպքում, դատարանի նախագահը կարող է դատավորից բացատրություններ պահանջել, նախաձեռնել **կարգապահական վարույթ**: Մակայն, դատարանի նախագահն իրավասու չէ գնահատելու դատավորի արժանիքները: Կարգապահական վարույթն իրականացնում և պատիժ է կիրառում Արդարադատության գերագույն դատարանը, որի անդամների քանակը հստակ սահմանված չէ: Դատարանն ունի նախագահ և երկու փոխնախագահ, ովքեր որոշում են քանի դատավորի կարիք ունեն, դատավորներին առաջարկում է Արդարադատության նախարարությունը:

- 3) Սահմանադրության 86-րդ հոդվածի համաձայն դատավորները **նշանակվում են** Հանրապետության նախագահի կողմից՝ Կառավարության առաջարկությամբ կամ Արդարադատության նախարարի կողմից՝ Հանրապետության նախագահի համաձայնությամբ: Բոլոր նշանակումների հիմքում դրվում են բարձր ատյանի դատարաններում տեղակայված, դատավորներից կազմված մարմինների առաջարկները: Օրենքը չի պարտադրում, սակայն փորձը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակներում այդ մարմինների համաձայնությանը հակառակ դատավոր չի նշանակվել:
- 4) Դատարանների նախագահներն ունեն փոքր մասնակցություն դատարանների **բյուջեների** կառավարման հարցերում, սակայն այստեղ նրանք ենթարկվում են առավել բարձր ատյանի դատարանների նախագահներին և Արդարադատության նախարարին:
- 5) **Ավստրիայում դատական խորհուրդ չկա**: Ավստրիայի դատավորների ասոցիացիան առաջարկում է ստեղծել նման մարմինը, Կառավարությունը կողմ չէ:

Հարկ է նշել, որ քննարկվող հարցաշարի 2-րդ կետում, ավստրիական կողմը պատասխանում է, որ օրենսդիրն ուղղակի ազդեցություն չունի դատական համակարգի վրա: 3-րդ կետում Ավստրիան հաստատում է, որ գործադիրն ունի ազդեցություն դատական իշխանության վրա, շատ հարցերում ներկայացվածություն: Այն, որ դատական համակարգի անկախությանն առնչվող բոլոր ոլորտներում, որոնք վերը թվարկվեցին, Գործադիրն ունի դեր, կարող է նշանակել, որ ավանդաբար գործադիրն ու դատականը բավարար չափով առանձնացված չեն: Նման դեպքում Գործադիրը հեշտությամբ չի համաձայնվի վայր դնել իր այն լիազորությունները, որոնք թույլ են տալիս վերահսկել դատական

համակարգը: Այսինքն, ավանդաբար այդքան սերտ լինելու պայմաններում, առնվազն դժվար կլինի ստեղծել գործադիրից անկախ մարմին: Իսկ եթե պիտի ստեղծվի և գործի գործադիրի ազդեցության ներքո՝ ապա դա պարզապես անիմաստ է: Դատական համակարգի անկախությունը երաշխավորող մարմինը չի կարող ինքնին անկախ չլինել:

## 11. Իտալիա

Իտալիան ունի եռաստիճան դատական համակարգ: Բարձրագույն դատական ատյանը Վճռաբեկ դատարանն է, բացառությամբ սահմանադրական հարցերի, որոնք քննում է երկրի Սահմանադրական դատարանը: Իտալիայում քրեական/քաղաքացիական եւ վարչական դատավարությունները խստորեն տարանջատված են և երկրում գործում է երկու խորհուրդ. համապատասխանաբար՝ **Բարձրագույն դատական խորհուրդ և Վարչական արդարադատության խորհուրդ:**

Իտալիայի Սահմանադրության<sup>115</sup> 104-րդ հոդվածի համաձայն՝ դատական իշխանությունն անկախ է իշխանության մյուս ճյուղերից: Հաջորդ նախադասությամբ՝ Բարձրագույն դատական խորհուրդը նախագահում է Հանրապետության նախագահը: **Ուղղակի նշում՝ որպես անկախության երաշխավորի, Սահմանադրությունը չի պարունակում:**

ԲԴԽ-ն՝ 105-րդ հոդվածի համաձայն մասնակցում է դատավորների նշանակմանը, առաջխաղացման և կարգապահության հարցերին, 106-րդ հոդվածի համաձայն՝ սահմանված չափանիշների առկայության դեպքում, նշանակման է ներկայացնում Վճռաբեկ Խորհրդականներին, 107-րդ հոդվածով սահմանված կարգով որոշում է դատավորի անփոփոխելիության սկզբունքներից բացառություններ անելու մասին:

108-րդ ու 110-րդ հոդվածների իմաստով դատարանների վարչական կառավարման լիազորությունը չի պատկանում ԲԴԽ-ին: Այն իրականացնում է Արդարադատության նախարարությունը: Այս տեսանկյունից, ի տարբերություն Լեհաստանի՝ Իտալիան ընտրել է դատարան-գործադիր հարաբերակցության երկրորդ մոդելը:

Մինչև 2006թ.-ը ԲԴԽ-ն մենաշնորհ ուներ **դատավորների վերապատրաստման** հարցում: 2006թ. արձակված թիվ 26 դեկրետի ուժով 2012թ.-ին հիմնադրվեց, 2013թ.-ից սկսեց գործել Դատական Դպրոցը, որը կազմակերպում և իրականացնում է դատավորների

<sup>115</sup> Իտալիայի Սահմանադրություն,

<[http://www.concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/italy/italy--e.htm](http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/italy/italy--e.htm)>



վերապատրաստումները: Սակայն, սահմանված է, որ ծրագրերը նախապատրաստելիս Դպրոցը պետք է հաշվի առնի ԲԴԽ-ի տրամադրած ուղեցույցները:

Դատավորների **կարգապահական վարույթների** հարցում ԲԴԽ-ն մենաշնորհ ունի: 2006թ.-ին ընդունված թիվ 109 դեկրետի ուժով դատավորի և դատախազի մասնակցությամբ կարգապահական վարույթ իրականացնող և սանկցիա կիրառող մարմինը ԲԴԽ-ն է: Այս վարույթի շրջանակներում ընդունված ԲԴԽ-ի որոշումները կարող են բողոքարկվել երկրի Գերագույն դատարան:

Դատավորների **վարքագծի կանոնների սահմանման հարցում** ԲԴԽ-ն դերակատարում չունի. երկրում գործում է Դատավորների Ասոցիացիայի կողմից ընդունված վարքագծի կանոնագիրքը:

Իտալիայի ԲԴԽ-ի կազմը հետևյալն է.

- Վճռաբեկ դատարանի առաջին նախագահն ու Գլխավոր դատախազը՝ ի պաշտոնե.
- անդամների 2/3-րդն ընտրվում են բոլոր դատարանների դատավորներից, 1/3-րդը՝ 12 տարվա մասնագիտական ստաժ ունեցող իրավաբաններից:

Անդամներն ընտրվում են 4 տարի ժամկետով, որի ավարտից հետո անմիջապես վերընտրվել չեն կարող:

Նշենք, որ այս ԲԴԽ-ն գործում է քրեական և քաղաքացիական ոլորտների համար: Վարչական արդարադատության ոլորտում գործում է Վարչական արդարադատության խորհուրդը: Այն չունի սահմանադրական կարգավիճակ: ՎԱԽ-ը կազմված է

- 10 վարչական դատավորներից.
- 4 իրավաբաններից՝ 20 տարվա մասնագիտական ստաժով, ընտրված Խորհրդարանի կողմից,
- 1 ի պաշտոնե անդամ՝ Պետական խորհրդի նախագահ:

Դատավորների/դատախազների նշանակման հարցում ՎԱԽ-ն իր լիազորությունը կիսում է Նախարարների խորհրդի հետ: ՎԱԽ-ը կառավարում է դատավորների վերապատրաստման ողջ ընթացքը և հաստատում ուսուցման ծրագիրը: Վարչական դատավորների **կարգապահական վարույթ իրականացնող միակ մարմինը ՎԱԽ-ն է**: ՎԱԽ-ի կարգապահական բաժնի որոշումները բողոքարկվում են Հռոմի առաջին աստիճանի վարչական դատարան, իսկ մնացյալը՝ Պետական խորհուրդ:

Վարչական դատավորների վարքագծի կանոնները կրկին սահմանված են Դատավորների ասոցիացիայի կողմից, ՎԱԽ-ն այստեղ դեր չունի: Այս Ասոցիացիան ինքնուրույն մարմին չէ, այն Պետական խորհրդի կառուցվածքային ստորաբաժանում է: ՎԱԽ-ն իրավասու է

Կառավարությանը խորհուրդներ տալ վարչական արդարադատության, վարչական դատավորների և դատարանների հետ կապված հարցերով:

Պետության կողմից տրամադրված ֆինանսները կառավարելու հարցում ՎԱԽ-ը անկախ է: Ինստիտուցիոնալ կամ քաղաքական տեսանկյունից այն որևէ մարմնի կամ սուբյեկտի հաշվետու չէ:<sup>116</sup>

## 12. Վրաստան

Վրաստանի դատական համակարգը **եռաստիճան է՝** առաջին, վերաքննիչ և վճռաբեկ աստյանը: Վերջին՝ վճռաբեկ աստյանը երկրի բարձրագույն դատական աստյանն է և կրում է Գերագույն դատարան անվանումը: Սահմանադրաիրավական խնդիրները լուծում է Սահմանադրական դատարանը:

Դատական համակարգի անկախության ապահովման նպատակով Վրաստանում գործում է Արդարադատության բարձրագույն խորհուրդը:

Վրաստանի Սահմանադրությունը դրույթներ չի պարունակում դատական իշխանության **անկախության երաշխավորի** մասին: Սակայն, «Դատարանների մասին» օրենքի<sup>117</sup> 7-րդ գլուխը նվիրված է Արդարադատության բարձրագույն խորհրդին: 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Արդարադատության բարձրագույն խորհուրդը դատարանների **անկախության ապահովողն** է: Օրենքի 49-րդ հոդվածի համաձայն, Վրաստանի ԱԲԽ-ն.

- նշանակում և պաշտոնից ազատում է դատավորներին, բացառությամբ՝ դատարանների նախագահների և Գերագույն դատարանի անդամների, որոնք ընտրվում են Խորհրդարանի կողմից՝ սակայն ԱԲԽ-ի առաջարկությամբ.
- սահմանում է Դատավորների որակավորման հանձնաժողովի կազմը.
- հաստատում է ԱԲԽ կառուցվածքն ու անձնակազմը, պաշտոնների անվանացանկն ու աշխատավարձը.
- պատրաստում և հաստատում է դատարանների կազմակերպչական աշխատանքները.

<sup>116</sup> Իտալիայի Վարչական արդարադատության խորհրդի կառուցվածք և լիազորությունները, <[https://www.ency.eu/images/stories/pdf/factsheets/italy\\_cpga.pdf](https://www.ency.eu/images/stories/pdf/factsheets/italy_cpga.pdf)>; <[https://www.ency.eu/images/stories/pdf/factsheets/italy\\_csm.pdf](https://www.ency.eu/images/stories/pdf/factsheets/italy_csm.pdf)>

<sup>117</sup> «Ընդհանուր դատարանների մասին» Վրաստանի օրենք, <<https://matsne.gov.ge/en/document/download/90676/13/en/pdf>>

- իրականացնում է դատավորների կարգապահական վարույթները՝ իր լիազորությունների շրջանակներում: Մնացյալ մասով կարգապահական վարույթ իրականացնում է Գերագույն դատարանի Կարգապահական պալատը.
- ներկայացնում է դատախիրավական բարեփոխումների ծրագրեր:

Ինչ վերաբերվում է դատական համակարգի **ֆինանսաբյուջետային** հարցերին, ապա Խորհրդի կազմում գործում է Դատական դեպարտամենտը, որը զբաղվում է դատական համակարգի ֆինանսական կառավարմամբ:

Համակարգի վարչական կառավարումն ապահովելու համար Խորհուրդը և Բարձրագույն դատարանի պլենումն ընտրում են օրենքով սահմանված չափանիշներին համապատասխանող վրաց քաղաքացիների, ովքեր կցվում են դատարանների վարչական գրասենյակներին:

ԱԲԽ-ն լիազորություն չունի դատավորների **վարքագծի կանոնների** սահմանման հարցում: Քննարկվող օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասը նկարագրում է Արդարադատության բարձրագույն խորհրդի կազմը: Այն է՝

- 8 դատավորներ՝ ընտրված Վրաստանի դատավորների ինքնակառավարման մարմնի կողմից.
- 5 անդամներ՝ ընտրված Խորհրդարանի կողմից, նրանք կարող են լինել իրավաբանների միությունների անդամներ, պրոֆեսորներ, փաստաբաններ, ՀԿ-ների ներկայացուցիչներ.
- 1 անդամ՝ նշանակված Հանրապետության Նախագահի կողմից, որը կարող է լինել նախորդ կետում նշված սուբյեկտներից մեկը:

### 13. Ալբանիա

Ալբանիայում գործում է եռաստիճան դատական համակարգ՝ առաջին աստիճան, վերաքննիչ, վճռաբեկ՝ Գերագույն դատարան: Սահմանադրական իրավունքին առնչվող հարցերով գործերը քննում է Սահմանադրական դատարանը: Ալբանիայում դատավորների և դատարանների գործունեությունը պաշտպանում է Արդարադատության բարձրագույն խորհուրդը:

Ալբանիայի իրավական համակարգում առավելագույնի է հասցված որոշակիության սկզբունքը:

Սույն զեկույցում քննարկվելու է 2 իրավական ակտ՝ Սահմանադրությունը<sup>118</sup> և «Արդարադատության բարձրագույն խորհրդի կազմակերպման և գործունեության մասին» օրենքը:<sup>119</sup>

Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Արդարադատության բարձրագույն խորհուրդն, ի թիվս այլոց, **պաշտպանում է դատավորների և դատարանների գործունեությունը**: Սահմանադրության 136-րդ հոդվածը նկարագրում է դատավորների նշանակման կարգը: Այսպիսով,

- Բարձրագույն դատարանի անդամներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Խորհրդարանի համաձայնությամբ.
- Մնացյալ բոլոր դատավորներին կրկին նշանակում է Հանրապետության նախագահը, բայց արդեն Արդարադատության բարձրագույն խորհրդի առաջարկությամբ:

Սահմանադրության 147-րդ, 154-րդ և այլ հոդվածները նույնպես կարգավորում են այս մարմնի գործունեությունը: Սակայն, Խորհրդի լիազորությունները կարգավորված են օրենքով: Դրա 2-րդ հոդվածը թվում է Արդարադատության բարձրագույն խորհրդի լիազորությունները, ըստ որի՝ ԱԲԽ-ին է պատկանում դատավորներին **այլ դատարան տեղափոխելու**, դատավորի լիազորությունները **դադարեցնելու**, **կարգապահական վարույթ** իրականացնելու, դատավորների **գնահատման չափանիշները** սահմանելու, դատավորների **գնահատման և առաջխաղացման գործընթացի** արդարության երաշխիքների նկատմամբ վերահսկողություն կատարելու լիազորությունները: ԱԲԽ-ի որոշումները **բողոքարկվում են** երկրի Բարձրագույն դատարան:

Ալբանիայում դատավորներին **արգելվում է** մասնակցել վարչական կառավարմանը: Այն իրականացվում է Բարձրագույն դատարանի նախագահի, Արդարադատության նախարարի և Գլխավոր դատախազի կողմից՝ համար:<sup>120</sup> ԱԲԽ-ն սակայն, լիազորություններ չունի դատավորների **վարքագծի սահմանման** հարցում: Երկրում գործում է Ազգային դատական կոնֆերանսի ժամանակ ընդունված «Դատական վարքագծի կանոնագրիքը»:<sup>121</sup>

<sup>118</sup> Ալբանիայի Սահմանադրություն, <<https://www.osce.org/albania/41888>>

<sup>119</sup> «Արդարադատության բարձրագույն խորհրդի կազմակերպման և գործունեության մասին» Ալբանիայի օրենք, <<https://www.osce.org/albania/41895?download=true>>

<sup>120</sup> «Դատական իշխանության կազմակերպման մասին» Ալբանիայի օրենք, <<https://www.osce.org/albania/41891?download=true>>

<sup>121</sup> Ալբանիայի «Դատական վարքագծի կանոնագրիք», <[https://euralius.eu/old/images/By-Laws/Code\\_of\\_Judicial\\_Ethics\\_Final\\_judges.pdf](https://euralius.eu/old/images/By-Laws/Code_of_Judicial_Ethics_Final_judges.pdf)>

Կարևորելով Արդարադատության բարձրագույն խորհրդի դերը, Սահմանադրության 154-րդ հոդվածը սահմանում է, որ Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի 9 անդամներից երեքն ԱԲԽ-ի կազմից են:

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԲԽ-ի անդամներն են.

- Հանրապետության նախագահը.
- Բարձրագույն դատարանի նախագահը.
- Արդարադատության նախարարը.
- 3 անդամ՝ ընտրված Խորհրդարանի կողմից.
- 9 դատավոր՝ ընտրված Ազգային դատավորների կոնֆերանսի կողմից:

#### 14. Բոսնիա և Հերցեգովինա

Այստեղ գործում է եռաստիճան դատական համակարգ, երրորդ աստիճանը կրում է Գերագույն դատարան անվանումը, իսկ սահմանադրական գործերը քննում է Սահմանադրական դատարանը: Բոսնիա և Հերցեգովինայում դատական համակարգի **անկախության** երաշխավորման նպատակով ընդունվել է օրենք՝ Բարձրագույն դատական և դատախազական խորհրդի մասին:<sup>122</sup>

ԲԴԴԽ-ն **անկախ և ինքնավար մարմին է**, որի խնդիրը **անկողմնակալ և պրոֆեսիոնալ** դատական համակարգի երաշխավորումն է, հետևյալ լիազորություններով.

- նշանակում է երկրի բոլոր դատական աստիճանների բոլոր դատավորներին և նախագահներին, դատախազներին, բացառությամբ՝ Սահմանադրական դատարանի: ՄԴ անդամները 9-ն են, որոնցից 4-ը ընտրվում են Բոսնիա և Հերցեգովինայի Խորհրդարանի կողմից, 2-ը՝ Սրբսկայի Հանրապետության Խորհրդարանի կողմից, 3-ին նշանակում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահը՝ Բոսնիա և Հերցեգովինայի Նախագահի հետ խորհրդակցելուց հետո.
- առաջարկում է Սահմանադրական դատարանի անդամների թեկնածություններ.
- ստանում, կարգապահական վարույթում քննարկում և որոշում է կայացնում կապված դատավորների և դատախազների դեմ բերված բողոքների հետ.

<sup>122</sup> Դատավորների և դատախազների բարձրագույն խորհրդի մասին Բոսնիա և Հերցեգովինայի օրենք,  
<[https://www.legislationline.org/download/id/6943/file/BiH\\_Law\\_high\\_judicial\\_prosecutorial\\_council\\_2004\\_en.pdf](https://www.legislationline.org/download/id/6943/file/BiH_Law_high_judicial_prosecutorial_council_2004_en.pdf)>

- խորհրդակցելով մասնագիտացված մարմինների հետ՝ կազմակերպում է դատական և դատախազական վերապատրաստման դասընթացներ.
- որոշում է կայացնում կապված դատավորի, դատախազի կողմից պաշտոնի անհամատեղելիության կանոնների խախտման հետ.
- տեղափոխում է դատավորին մեկ այլ դատարան.
- մասնակցում է դատարանների և դատախազական մարմինների բյուջեների քննարկմանը՝ առավելագույնս ներկայացնելով վերջիններիս շահերը, և ապահովելով այս մարմինների համարժեք և շարունակական ֆինանսավորումը.
- Արդարադատության նախարարի, դատարանի նախագահի հետ խորհրդակցելով սահմանում է յուրաքանչյուր դատարանի դատավորների թիվը.
- նախատեսում է դատավորների և դատախազների գնահատման չափանիշներ,
- իր լիազորություններին առնչվող հարցերով օրենսդրական նախագծերի վերաբերյալ կարծիք է ներկայացնում,
- սահմանում է դատական և դատախազական վարքագծի կանոններ:

Խորհուրդը կազմված է 15 անդամից, որոնցից.

- 6 դատավորից՝ երկրի բոլոր դատարաններից, ընտրված դատավորների կողմից.
- 6 դատախազից՝ երկրի բոլոր դատախազություններից, ընտրված դատախազների կողմից.
- 2 փաստաբանից՝ 1-ը ընտրված Բոսնիա և Հերցեգովինայի փաստաբանական համայնքի, 1-ը՝ Սրբապետության փաստաբանական համայնքից,
- 1 դատական իշխանությունից դուրս անձից՝ ընտրված օրենսդրի կողմից, սակայն ոչ օրենսդրի կազմից,
- 1 դատական իշխանությունից դուրս անձից՝ ընտրված գործադրի կողմից, սակայն ոչ գործադրի կազմից:

## 15. Քենիա

Քենիայում նույնպես գործում է **Գերագույն դատարան**, որը կատարում է և՛ բարձրագույն դատական ատյանի գործառույթը, և՛ քննում է **սահմանադրաիրավական վեճեր**:

Քենիայում դատական համակարգի **անկախության** հարցում գլխավոր դերակատարում ունի Դատական ծառայության հանձնաժողովը: Քենիայի Սահմանադրության<sup>123</sup> 160-րդ հոդվածը հռչակում է դատական համակարգի անկախությունը: Սահմանադրության 4-րդ մասը կրում է «Դատական ծառայության հանձնաժողով» անվանումը, հետևաբար ամբողջությամբ նվիրված է այս մարմնի կազմակերպման և գործունեությանը: 172-րդ հոդվածի համաձայն՝ **Դատական ծառայության հանձնաժողովը խթանում է դատական համակարգի անկախությանը:**

Հանձնաժողովը.

- Հանրապետության նախագահի նշանակմանն է ներկայացնում դատավորների թեկնածուներին.
- ուսումնասիրում և առաջարկություններ է անում դատավորների և դատական համակարգի այլ աշխատակիցների գործունեության մասին.
- պատրաստում և ներդնում է դատավորների վերապատրաստման և շարունակական մասնագիտական կրթության ծրագրեր: Այստեղ նրան օժանդակում է 2008թ. հիմնադրված Դատական վերապատրաստման ինստիտուտը.
- կառավարությանն առաջարկներ է անում կապված արդարադատության ոլորտի վարչական կառավարման արդյունավետության բարձրացման հետ.
- նշանակում, բողոքներ է քննարկում, քննում և պաշտոնից հեռացնում է դատարանների աշխատողների.
- իրականացնում է կարգապահական վարույթներ:

Հանձնաժողովի կազմն է.

- Գերագույն դատարանի նախագահ, ով Հանձնաժողովի նախագահն է.
- 1 գերագույն դատարանի դատավոր՝ ընտրված մյուս դատավորների կողմից.
- 1 վերաքննիչ դատարանի դատավոր՝ ընտրված մյուս դատավորների կողմից.
- 1 բարձրագույն դատարանի դատավոր, 1 մագիստրատ, որոնցից մեկը պետք է իգական սեռի ներկայացուցիչ լինի, մյուսը՝ արական, ովքեր ընտրվում են դատավորների և մագիստրատների ասոցիացիայի կողմից.
- գլխավոր դատախազից.

- 2 փաստաբան, մեկը՝ իգական, մյուսը՝ արական սեռի ներկայացուցիչ, ովքեր պետք է ունենան մասնագիտական կարիերայի առնվազն 15 տարվա ստաժ, ընտրվում են փաստաբանների գործունեությունը կարգավորող մարմնի կողմից.
- 1 անձ՝ նշանակված Հանրային ծառայության հանձնաժողովի կողմից.
- 2 հասարակության ներկայացուցիչներ, ոչ իրավաբաններ, մեկը՝ իգական, մյուսը՝ արական սեռի ներկայացուցիչ, ովքեր նշանակվում են Հանրապետության Նախագահի կողմից՝ Խորհրդարանի հաստատմամբ:

Դատարանների **ֆինանսների, ծախսերի** հարցերը կարգավորում է Սահմանադրության 176-րդ հոդվածով նշված Դատական ֆոնդը: Բացի այս, Դատական ծառայության ակտի<sup>124</sup> 34-րդ բաժնի հիման վրա հիմնադրվել և գործում է Արդարադատության կառավարման ազգային խորհուրդը, որի նպատակը դատարանների վարչական կառավարումն է:

## 16. Ճապոնիա

Ճապոնիայի դատական համակարգը եռաստիճան է: Երրորդ՝ բարձրագույն աստիճանը **Գերագույն դատարանն է**, որը քննում է նաև **սահմանադրաիրավական վեճեր**, ուստիև՝ Սահմանադրական դատարան երկրում չկա:

Դատավորների **նշանակումն** իրականացնում են Հատուկ ընտրական կոմիտեները, որոնցում ներկայացվածություն ունեն Գերագույն դատարանի անդամները: Դատական համակարգի **վարչական կառավարումն** իրականացնում է Արդարադատության նախարարությունը: Դատավորների **կարգապահության, պաշտոնավարման** դադարման հարցերի համար գործում է Պաշտոնանկության կոմիտեն և ազատման դատարանը:<sup>125</sup>

<sup>124</sup> Քենիայի Դատական ծառայության ակտը.  
<<http://kenyalaw.org:8181/exist/kenyalex/actview.xql?actid=No.%201%20of%202011>>

<sup>125</sup> <<https://www.semanticscholar.org/paper/The-Japanese-Judiciary%3A-Maintaining-Integrity%2C-and-Haley/9cb9297ca69c52dd2037aa7a9975349249dd3f32?p2df>>



### **3. ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի դերը հայաստանյան դատարանների և դատավորների անկախության երաշխավորման համատեքստում, բարեփոխումների իրականացման ուղղությունները**

Համաձայն ՀՀ սահմանադրության 173-րդ հոդվածի՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամից, որից հինգ անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից: Բարձրագույն դատական խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր աստիճանների դատարաններից: Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատարանի նախագահ կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ: Մյուս հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից: Ազգային ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատավոր:

Բարձրագույն դատական խորհրդի անդամներն ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի:

Բարձրագույն դատական խորհրդի լիազորություններն են՝

- 1) կազմել և հաստատել դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները.
- 2) Հանրապետության նախագահին առաջարկել նշանակման ենթակա, ներառյալ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին.
- 3) Հանրապետության նախագահին առաջարկել նշանակման ենթակա դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուներին.
- 4) Ազգային ժողովին առաջարկել Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահի թեկնածուներին.

- 5) լուծել դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու հարցը.
- 6) լուծել իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.
- 7) լուծել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.
- 8) լուծել դատավորների լիազորությունների դադարեցման հարցը.
- 9) հաստատել իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնել Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար.
- 10) օրենքին համապատասխան ձևավորել իր աշխատակազմը:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

Այսպիսով, Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) կարևորագույն **դերն է երաշխավորել դատարանների և դատավորների անկախությունը, իսկ կարևորագույն լիազորություններից է դատավորների լիազորությունների դադարեցման հարցի լուծումը:**

«ՀՀ Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի համաձայն՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն՝

- 1) Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը.
- 2) Լիազոր մարմինը (ՀՀ արդարադատության նախարարությունը).
- 3) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

Ի տարբերություն առաջին երկու մարմինների, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցում միայն Դատական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ<sup>126</sup> կետերով նախատեսված

---

<sup>126</sup> Դատական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերը սահմանում են դատավորի հետևյալ վարքագծի կանոնները. Դատավորը պարտավոր է.

15) ներկայացնել գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան և այդ օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ.

16) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ, որոնք հաստատում են, որ իր գույքի փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը կամ ծախսը) ողջամտորեն հիմնավորվում է օրինական

վարքագծի կանոնների խախտման առնչությամբ: Մնացած մյուս դեպքերում, որոնք սահմանված են օրենսգրքի 69-րդ (Դատավորի վարքագծի ընդհանուր կանոնները) և 70-րդ հոդվածներով (Դատավորի վարքագծի կանոններն ի պաշտոնե գործելիս) դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցում է և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդություն ԲԴԽ ներկայացնում են Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը և ՀՀ արդարադատության նախարարությունը:

2021 թվականի մարտի 19-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին սահմանադրական օրենքը:<sup>127</sup> Ըստ այդմ, նոր փոփոխություններով, ի թիվս այլնի, ԲԴԽ-ին նախատեսվում էր տալ լիազորություն ստեղծելու դատավորների որոշակի ներքին մասնագիտացում՝ հիմնված, *inter alia*, գործերի «բարդության» վրա: Առանձին բարդության գործերի ցանկը ենթակա էր մշակման ԲԴԽ-ի կողմից: Ընդ որում, դատավորները քննելու էին առանձին բարդության գործերն ի լրումն այլ գործերի: Բացի այս, Օրենսգրքում ավելացվելու էր նոր 148.1 հոդվածը, որի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով ԲԴԽ դիմում կկարողանա ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝ իր մասնակցությամբ կոնկրետ գործով, եթե առերևույթ առկա է (...) էական կարգապահական խախտման հիմք և պահպանված են (...) սահմանված ժամկետները:

Խոսելով ԲԴԽ դերի և լիազորությունների իրականացման տեսանկյունից, քննարկվող սահմանադրական օրենքը հակասահմանադրական էր և վտանգի տակ էր դնում դատավորների և դատարանների անկախությունը, ԲԴԽ դերը, անկախությունն ու արդյունավետությունը: Առհասարակ, պետք է որդեգրել այնպիսի մոտեցում, որ ՀՀ դատական համակարգում առկա խնդիրները լուծվեն համակարգային և փաստարկված փոփոխությունների արդյունքում, այն դիտարկելով սահմանադրական բարեփոխումների լույսի ներքո, և ոչ թե հատվածական և չհիմնավորված փոփոխություններով:

Սահմանադրական օրենքի սահմանադրության համապատասխանության հարցը լուծելու դիմումով ՀՀ նախագահը դիմել էր Սահմանադրական դատարան:

---

եկամուտներով, կամ իր մոտ առկա չէ չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրը օրինական է և արժանահավատ:

<sup>127</sup> <[http://www.parliament.am/draft\\_history.php?id=12259&lang=arm](http://www.parliament.am/draft_history.php?id=12259&lang=arm)>, <[http://www.parliament.am/draftreading\\_docs7/P-877\\_DR2.pdf](http://www.parliament.am/draftreading_docs7/P-877_DR2.pdf)>

Սահմանադրական դատարանն իր 2021 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1613 որոշմամբ արձանագրեց, որ վիճարկվող իրավակարգավորումը՝ առանձին բարդության գործեր քննող դատավորներ ընտրելու մասով, **չի համապատասխանում դատավորի սահմանադրաիրավական կարգավիճակին և դրա հետ փոխկապակցված՝ արդար դատաքնության իրավունքի բաղադրատարր հանդիսացող անկախության և անաչառության սկզբունքների պահանջներին:**<sup>128</sup> Անդրադառնալով մյուս փոփոխությանը, Սահմանադրական դատարանը գտավ, որ **վիճարկվող դրույթներով առաջարկվող կարգավորումները համահունչ չեն Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի հետ:**<sup>129</sup>

Այսպիսով, կարևոր է արձանագրել, որ Սահմանադրական դատարանը հստակ նշել է, որ. «**Վիճելի գործընթացում ներգրավված սուբյեկտներից ԲԴԽ-ի համապատասխան լիազորությունը** որոշակիորեն սահմանված է Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում, համաձայն որի՝ **ԲԴԽ-ն լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:** Կարգապահական վարույթ հարուցելու մասին դիմումներ/հաղորդումներ ներկայացնելու, կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտների որոշման հարցն օրենսդրի լայն հայեցողության շրջանակներում է, որի **սահմաններն ուրվագծվում են ինչպես Սահմանադրությամբ ամրագրված վերաբերելի հիմնարար սկզբունքներով,** այնպես էլ դրանց բովանդակության բացահայտմանն ուղղված Սահմանադրական դատարանի դիրքորոշումներով: Իր հերթին, դատարանների անկախությունը **վերացական հասկացությունն է:** Այն ենթադրում է գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատարանների ու ողջ դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար»: Եվ այս անկախության երաշխավորը ԲԴԽ-ն է հանդիսանում, ուստի փորձելով մեկտեղել հաղորդում ընդունող, վարույթ հարուցող, հարուցված վարույթի գործը քննող տարբեր մարմինների իրավասությունը մեկ մարմնի ներքո վտանգվելու էր ոչ միայն դատարանների անկախությունը, այլև՝ ԲԴԽ շեղվելու էր իր հիմնական առաքելությունից և սկսելու էր զբաղվել օր օրի ավելացող բողոքների քննությամբ:

Հարկ է նաև նշել, որ փոփոխություններ նախատեսող սահմանադրական օրենքի վերաբերյալ 2021 թվականի մարտի 18-ին իր բացասական դիրքորոշումն էր հայտնել նաև քաղաքացիական հասարակության սեկտորը: Մասնավորապես, Իրավաբանների

<sup>128</sup> <https://www.concourt.am/armenian/decisions/common/2021/pdf/sdv-1613.pdf>

<sup>129</sup> Տե՛ս նույն տեղում:

հայկական ասոցիացիան և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան ինտրահարույց և Սահմանադրությանը հակասող են գնահատել սահմանադրական օրենքը, և նշել, որ այն վտանգի տակ են դնում դատավորների և դատարանների անկախությունը, ինչպես նաև նվազեցնում ԲԴԽ դերը՝ այդ անկախությունն ապահովելու հարցում:<sup>130</sup>

## **Առկա օրենսդրական մարտահրավերները և բարեփոխումների իրականացման ուղղությունները**

### **1. ԲԴԽ անդամների բարեվարքության ստուգումը**

2019 թվականի հոկտեմբերի 10-ին թիվ 1441-Լ որոշմամբ ՀՀ կառավարությունը ընդունեց Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին որոշումը (այսուհետ՝ դատաիրավական ռազմավարություն):<sup>131</sup> Դատաիրավական ռազմավարության շրջանակներում, ի թիվս այլ սուբյեկտների, նախատեսվում էր անցումային արդարադատության գործիքակազմեր ներդնել նաև ԲԴԽ անդամների բարեվարքությունը ստուգելու նպատակով: Այսպես, ըստ ռազմավարության՝ դատավորների բարեվարքության գնահատումն իրականացնելու համար ստեղծվելու է ոչ թե նոր՝ ad hoc մարմին, այլ այդ հարցի լուծման համար պատասխանատու է լինելու դատական համակարգի անկախության ապահովման սահմանադրական առաքելությամբ օժտված մարմինը՝ ԲԴԽ-ը: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով, որ դատավորների բարեվարքության գնահատումն իրականացնող մարմինը լինելու է ԲԴԽ-ը, հիմնարար նշանակություն ունի խորհրդի անդամների նկատմամբ բարձր վստահությունը ինչպես դատավորների, այնպես էլ լայն հանրության շրջանում: Այս համատեքստում, կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը քննում է ԲԴԽ անդամների հայտարարագրերը և խախտումներ հայտնաբերելու դեպքում նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու համար համապատասխան նյութերը ուղարկում է ԲԴԽ: Ենթադրվում է, որ այս գործընթացը բարձրացնելու է վստահությունը ԲԴԽ-ի նկատմամբ և

<sup>130</sup> <https://armla.am/48580.html>

<sup>131</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487>

կառուցողական մթնոլորտում բնականոն հունով իրականացվելու է դատավորների բարեվարքության ստուգումը:

Այս կարգավորումների ուժով ԿԿՀ-ն իրականացրեց ԲԴԽ անդամների վեթինգ՝ նրանց գույքային դրության՝ հայտարարագրերի վերլուծության և տվյալների համադրման միջոցով: Բայց պետք է ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ ԿԿՀ-ն այս գործիքակազմը կարող է կիրառել 2017 թվականի հուլիսի մեկից հետո ներկայացված հայտարարագրերի նկատմամբ: Այդուհանդերձ, գործիքակազմի կիրառման փորձը<sup>132</sup> ցույց տվեց, որ այն ամբողջական չէ, և միայն 2017 թվականի հուլիսի մեկից հետո ներկայացրած հայտարարագրերի վերլուծությամբ գործնականում իրատեսական չէ ԲԴԽ անդամների բարեվարքության ստուգումը: Ուստի, առ այսօր չլուծված է մնում ԲԴԽ գործող անդամների բարեվարքության ստուգման կարևորագույն հարցը:

Վերոգրյալի լույսի ներքո և նկատի ունենալով, որ ԲԴԽ-ն հանդիսանում է դատավորների և դատական համակարգի անկախության ապահովման երաշխավորը, գործող դատավորների և դատավորի թեկնածուների բարեվարքության ստուգման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնող մարմինը, առաջարկվում է առաջնահերթ իրականացնել ԲԴԽ անդամների բարեվարքության ստուգում՝ արդյունավետ և գործուն մեխանիզմների ներդրմամբ հետևյալ կարգով՝

1. ԲԴԽ անդամի գործունեության դադարեցման սահմանադրական հիմքերի վերանայում՝ բարեվարքության ստուգման արդյունքների վրա հետևյալ ուղղություններով.
  - Ակտիվների ստուգում (asset assessment).
  - Կասկածելի կապերի ստուգում (background assessment).
  - Գիտելիքների/հմտությունների ստուգում (proficiency assessment):
2. ԲԴԽ անդամի բարեվարքության ստուգման (վեթինգի) սահմանադրական մարմինների ստեղծում, այս մարմնի որոշումների բողոքարկման մեխանիզմների նախատեսում: Սահմանադրական փոփոխությունների անցումային դրույթներով ԲԴԽ-ի անդամների բարեվարքության ստուգման իրականացման համար ստեղծել հետևյալ ժամանակավոր մարմինները.

<sup>132</sup> Տե՛ս ԲԴԽ-38-Ո-Կ-16 որոշումը Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ռուբեն Վարդապարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ հետևյալ հղմամբ. <https://court.am/storage/uploads/files/bdx-disciplinary-proceedings/4nrSkd5mlfYwoXpoj72BaIKGIvVe7eu5bPCTCIgL.pdf>

- Որակավորման հանձնաժողով,
- Բողոքարկման խորհուրդ,
- Հանրային հանձնակատար:

Վերոհիշյալ մարմիններից առաջին երկուսը պետք է ձևավորվեն Ազգային Ժողովի կողմից իշխող և ընդդիմադիր քաղաքական ուժերի կողմից հավասար (50/50 տոկոս) հարաբերությամբ ձևավորված թեկնածուների ընտրության երկու ժամանակավոր հանձնաժողովների կողմից: Մարմինների անդամները պետք է ընտրվեն հատուկ մշակված օբյեկտիվ չափանիշների վրա:

Հանրային հանձնակատարը պետք է ընտրվի ԱԺ-ի կողմից՝ նախապես հայտարարված բաց մրցույթի միջոցով: Նախքան ԱԺ-ին թեկնածուներին ներկայացնելը, իրականացվում է մրցույթին մասնակցած բոլոր թեկնածուների համապատասխանության փուլ՝ ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի կողմից, որը պետք է կազմված լինի Ազգային Ժողովի կողմից իշխող և ընդդիմադիր քաղաքական ուժերի կողմից հավասար (50/50 տոկոս) հարաբերությամբ ձևավորված թեկնածուներից:

3. ԲԴԽ անդամ (վերաբերում է դատավոր անդամներին) նշանակվելու սահմանափակումների վերանայումը, ներառելով սահմանափակում դատավորի կողմից կայացրած դատական ակտի վերաբերյալ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում դատավորի գործողությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտի առկայությունը:

## **2. ԲԴԽ անդամների թեկնածուների բարեվարքության ստուգման մասին խորհրդատվական եզրակացությունների հասանելիության ապահովում**

ԲԴԽ անդամների թեկնածուների բարեվարքության ստուգման համար առանձին ընթացակարգ է սահմանվել ԿԿՀ մասին օրենքի 26.1 հոդվածով:<sup>133</sup> ԿԿՀ-ն ԲԴԽ անդամների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ իրականացնում է ուսումնասիրություններ և

<sup>133</sup> «ԿԿՀ-ի մասին» ՀՀ օրենքի 26.1 հոդվածի համապատասխան փոփոխությունները ընդունվել են 25.03.2020-ին և ուժի մեջ են մտել 02.05.2020-ին:

դրանց արդյունքներով ներկայացնում խորհրդատվական եզրակացություններ: Այդ ուսումնասիրությունը ենթադրում է բարեվարքության վերաբերյալ հատուկ մշակված հարցաթերթում<sup>134</sup> ներկայացված տվյալների ստուգում, անձի վերաբերյալ ՁԼՄ-ներում տեղ գտած նյութերի, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկատվության վերլուծություն, անձի՝ քրեական ենթամշակույթին պատկանելու հիմքերի ստուգում, գույքի գնահատում և այլն:

Այս փոփոխություններից հետո, ԿԿՀ-ն արդեն իրականացրել է ԲԴԽ-ի և ՀՀ Սահմանադրական դատարանի անդամների թեկնածուների բարեվարքության ստուգում: Լրատվամիջոցների հրապարակումների համաձայն,<sup>135</sup> ԿԿՀ-ն բացասական խորհրդատվական կարծիք էր ներկայացրել թեկնածուներից մեկի վերաբերյալ (թեկնածուն այն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահն էր): Բացասական կարծիքը ներկայացվեց Ազգային ժողովի պատգամավորներին, ովքեր պետք է ընտրեին թեկնածուին որպես Սահմանադրական դատարանի անդամ: Չնայած սրան, Ազգային ժողովը հաշվի չառավ ԿԿՀ-ի բարեվարքության ստուգման արդյունքները և պաշտոնատար անձին ընտրեց որպես Սահմանադրական դատարանի անդամ (դատավոր): Բարեվարքության ստուգման վերաբերյալ ԿԿՀ-ի խորհրդատվական եզրակացությունները հրապարակման ենթակա չեն, այդ եզրակացության մշակման գործընթացը հանրային չէ: Այսպիսով, այս խիստ գաղտնիության ռեժիմի դեպքում անհնար է գնահատել այս գործառույթի արդյունավետությունը, իրականացնել արդյունավետ հանրային վերահսկողություն և վերլուծել, թե տրամադրված եզրակացություններից (լինի այն դրական, թե՛ բացասական) քանիսն են հաշվի առնվել որոշումների կայացման ժամանակ և ինչքանով են դրանք ամբողջական տեղեկություններ պարունակում թեկնածուի բարեվարքության վերաբերյալ: Բացի այս, մեկ այլ խնդիր որ առկա է եզրակացությունների մշակման գործընթացում՝ դա բարեվարքություն ստուգում անցնող թեկնածուից ԿԿՀ-ի կողմից որոշ հարցերի շուրջ պարզաբանումներ ստանալու հնարավորության բացակայությունն է: Այս խնդիրը, օրինակ՝ առաջ ծագեց, երբ ԱԺ-ում

<sup>134</sup> ԿԿՀ-ն բարեվարքության վերաբերյալ մշակել է հարցաթերթիկ, հասանելի է՝ [<http://cpcarmenia.am/hy/news/item/2020/05/26/154789/>](http://cpcarmenia.am/hy/news/item/2020/05/26/154789/):

<sup>135</sup> Որոշ լրատվամիջոցների հրապարակումները տե՛ս [-<https://bit.ly/32TJF7r>](https://bit.ly/32TJF7r), [-<https://bit.ly/2IMpp0q>](https://bit.ly/2IMpp0q):



բարեվարքության ստուգման եզրակացությունը քննարկելու ժամանակ, թեկնածուն հայտնեց եզրակացության մեջ տեղ գտած ոչ ճիշտ տեղեկությունների մասին:<sup>136</sup>

Վերոգրյալի լույսի ներքո առաջարկվում է բարեվարքության ստուգման վերաբերյալ ԿԿՀ-ի խորհրդատվական եզրակացությունները դարձնել բաց և հասանելի հանրության համար, անշուշտ ապահովելով օրենքով նախատեսված անձնական տվյալների գաղտնիությունը՝ հանրամատչելի անձնական տվյալների հաշվառմամբ: Բացի այդ առաջարկում ենք, որ հնարավորություն ընձեռել ԿԿՀ-ին՝ բարեվարքության ստուգում անցնող թեկնածուից ստանալ պարզաբանումներ՝ եզրակացության լրիվ, բազմակողմանի և օբեկտիվ տրամադրման նպատակով:

**3. Սահմանադրական փոփոխությունների իրականացման համատեքստում ԲԴԽ-ի կողմից դատավորների բարեվարքության ստուգումը՝ բացառությամբ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների դատավորների:**

ԲԴԽ-ի լիազորությունների ցանկում ավելացնել դատավորների բարեվարքության ստուգման իրականացման լիազորություն, որը հնարավորություն կտա ԲԴԽ-ին, բարեվարքության ստուգման իրականացման համար ստեղծված սահմանադրական ժամանակավոր մարմինների կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների, ԲԴԽ-ի, Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների դատավորների բարեվարքության իրականացումից անմիջապես հետո, իրականացնել դատական համակարգի մյուս ատյաններում պաշտոնավարող դատավորների մեկանգամյա բարեվարքության ստուգում:<sup>137</sup>

**4. ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական, գնահատման և ուսումնական հարցերով հանձնաժողովների կազմերի վերանայում:**

<sup>136</sup> <https://www.aravot.am/2020/09/15/1134999/>

<sup>137</sup> Այս մասով առաջարկված լուծումները տե՛ս Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից համատեղ կատարված փորձագիտական ուսումնասիրությունը հետևյալ թեմայով. «Դատավորի բարեվարքության ստուգումն ու պատասխանատվությունը՝ արտակարգ (անցումային արդարադատության) պայմաններում. միջազգային փորձն ու ՀՀ-ում իրականացման մեխանիզմները»: Ուսումնասիրությունը հասանելի է հետևյալ հղմամբ. <<https://armla.am/48881.html>>

2020 թ.-ի մարտի 25-ին Ազգային ժողովն ընդունեց «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք»<sup>138</sup> սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և հարակից այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծերը:

Այս օրենքներն ուղղված են դատավորների բարեվարքության գնահատման իրավական հիմքի ապահովմանը հետևյալ ուղղություններով. գույքի ստուգում (գույքի ձեռքբերման օրինականության ստուգում և գնահատում), արհեստավարժություն և հարգանք մարդու իրավունքների նկատմամբ, անկողմնակալություն (որոշումների կայացում առանց փոխկապակցված սուբյեկտների կամ այլ ազդեցության), Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի և մյուս հանձնաժողովների ձևավորման կարգ, ԲԴԽ անդամի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցում: Ըստ այդմ, Դատավորների ընդհանուր ժողովը ձևավորում է դատավորների Էթիկայի և կարգապահական հարցերի, Գնահատման և Ուսումնական հարցերի հանձնաժողովները: Այս բարեփոխման կարևոր նորարարությունը հանձնաժողովների կազմն է, որը նախատեսում է ՔՀԿ ոլորտի երկու ոչ դատավոր անդամների ներգրավում հանձնաժողովներից յուրաքանչյուրում:

Հանձնաժողովների կազմը հետևյալն է.

1. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը բաղկացած է 8 անդամից, որոնցից 6-ը դատավորներ են, իսկ 2-ը՝ ՔՀԿ ոլորտի ոչ դատավոր անդամներ:
2. Դատավորների գործունեության գնահատման հարցերի հանձնաժողովը բաղկացած է 5 անդամից, որոնցից 3-ը դատավորներ են, իսկ 2-ը՝ ՔՀԿ ոլորտի ոչ դատավոր անդամներ:
3. Ուսումնական հարցերի հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից, որոնցից 5-ը դատավորներ են, իսկ 2-ը՝ ՔՀԿ ոլորտի ոչ դատավոր անդամներ:

Չնայած այս բարեփոխմանը, որն առերևույթ դիտարկվում է ֆունկցիոնալ, այդուհանդերձ գործնականում դրա իրականացման հետ կապված **առկա են որոշ մտահոգություններ**: Մասնավորապես, **Էթիկայի և կարգապահական, ինչպես նաև Գնահատման**

<sup>138</sup> «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը ընդունվել է 25.03.2020թ.-ին և ուժի մեջ է մտել 02.05.2020թ.-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141490>»:

**հանձնաժողովներում ոչ դատավոր անդամների ներգրավվածությունը ցածր է, և դատավոր և ոչ դատավոր անդամների միջև հավասարակշռությունը չի ապահովվում:**

Այս անհամաչափ մոտեցումը և դատավոր անդամների բացարձակ մեծամասնության գործոնը կարող են նպաստել հանձնաժողովներում ոչ դատավոր անդամների անարդյունավետ աշխատանքին և նրանց մասնակցությունը դարձնել ձևական:

2020 թվականի հուլիսի 31-ին Դատավորների ընդհանուր ժողովը ընտրեց նշված երեք հանձնաժողովների անդամներին: Ցավոք, պետք է նշել, որ Ուսումնական և Գնահատման հանձնաժողովներում ընտրված «ՔՀԿ ոլորտի» երեք ներկայացուցիչներն իրականում ուղղակիորեն կապված են դատական համակարգի հետ, և ոչ թե ՔՀԿ սեկտորի:<sup>139</sup> Սա բխում է նրանից, որ ոչ դատավոր անդամների չափանիշներն ընդհանրական են, և դատական իշխանության հետ փոխկապակցված անձինք կարող են ընտրվել որպես Հանձնաժողովների ոչ դատավոր անդամ:

Վերոգրյալի լույսի ներքո առաջարկվում է փոփոխություն կատարել Դատական օրենսգրքում և վերանայել Դատավորների ընդհանուր ժողովի երեք հանձնաժողովի անդամների ներկայացվածության համաչափությունը: Մասնավորապես, Գնահատման և Ուսումնական հանձնաժողովների անդամների թիվը դարձնել զույգ և ապահովել երեք հանձնաժողովներում դատավոր և ոչ դատավոր անդամների թվի հավասարակշռում՝ բաշխելով հավասար քվոտաներ դատական իշխանության և հանրային սեկտորի ներկայացուցիչների միջև, ինչպես օրինակ արվել է ԲԴԽ տաս անդամների դեպքում (ընդհանուր տաս անդամներից հինգը դատավոր են, մյուս հինգը՝ իրավաբան գիտնական):

Բացի այդ, անհրաժեշտ է նաև փոփոխություն կատարել Դատական օրենսգրքում և սահմանել ոչ դատավոր անդամների ներկայացվածության նոր պահանջներ՝ սահմանափակելով նրանց փոխկապակցվածությունը դատական համակարգի հետ:

---

<sup>139</sup> Լրագրողական հետաքննության հոդվածները հասանելի են՝ <https://iravaban.net/284355.html>, <https://iravaban.net/284048.html>, <https://iravaban.net/284317.html>: